365 23
ћ-22

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ՀԱՄԿԿ (Բ) ԲՋԻՋՆԵՐԻ 3-ՐԴ ՀԱՄԱԲԱՆԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՅԻՍԻ 7—11, 1931 Թ.

355.23
Բ-22

ՀԱՅԿ. ՀՐԱՑԱՆԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931 Թ.

55-23
-22
2802-1

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Հաստատում եմ
ՌԳԿԲ Քաղվարչության
պետ՝ ԳԱՄԱՐՆԻԿ
28 մայիսի 1931 թ.

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ՀԱՄԿԿ (Բ) ԲՋԻՋՆԵՐԻ 3-ՐԴ ՀԱՄԱԲԱՆԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՅԻՍԻ 7–11, 1931 Թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. библиотека
ՀՍԽՀ – ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
20430-59

ԲԿ. ՀՐԱՅԱՍ[illegible]ԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931 Թ.

13 SEP 2013

41 267

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6757 (բ)
ՊԱՏՎԵՐ 3932
ՏԻՐԱԺ 1300

# ԱՄԿԿ (Բ)· ԲՋԻՋԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՀԱՄԱ-ՆԱԿԱՅԻՆ 3-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱ-ԱՁԵՎԸ ԲԳԿԿ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԸՆԿ. ԳԱՄԱՐՆԻԿԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Սոցիալիստական շինարարության հսկայական հա-ղթությունները, որոնք բնորոշվում են ԽՍՀՄ սոցիա-լմի շրջանը թևակոխելով և ընթացիկ տարում սո-ալիստական էկոնոմիկայի հիմքերի ավարտումով, ՙթխարի չափերով բարձրացրել և բարձրացնում են րհրդային Միության պաշտպանունակությունը և րմիր բանակի մարտունակությունը, որպես պրոլե-արական դիկտատուրայի զենքի:

## 1

Կուսբջիջների քարտուղարների 3-րդ համաբանա-յին խորհրդակցությունը նշում է՝ Կարմիր բանակի րտունակությունը կազմող բոլոր տարրերի նշանա-լից ամրացումը:

ա) Վերջին յերեք տարում (բջիջների քարտուղար-րի համաբանակային յերկրորդ խորհրդակցությու-ց անցած) բանակի կուսկազմակերպությունը կրկնա-տկել է իր շարքերը, ավելացնելով բանվորների կո-ղը 47,1 տոկոսից մինչև 63,7 տոկոս: Աճել և ամրա-լ է ստորին կուսբջիջը և ամրացել է նրանում կարմիր նակայինների և կրտսեր հրամանատարների շերտը: րձրացել է կուսկազմակերպության գաղափարական

մակարդակը, ամրացել է նրա բոլշևիկյան միաձու-լությունը, վորն իր արտահայտությունն է գտել և գտնում է կուսակցության գլխավոր գծի համար մղվող վճռական պայքարում՝ ընդդեմ ոպորտունիզմի, ընդդեմ աջ թեքման, վորպես ներկա շրջանում գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների. ընդդեմ հաշտվողականների և յերկերեսանիների:

բ) Նշանակալից չափով աճել է բանակի կուս. կազմակերպության և ստորին բջիջի ազդեցությունը զորմասերի կյանքի, կենցաղի, մարտական և քաղաքական պատրաստության վրա: Վերջին շրջանում բանակի կուսբջիջները «յերեսով դեպի մարտական պատրաստությունը» լոզունգի տակ ավելի սերտ, ավելի լավ և ավելի կոնկրետ են մոտեցել մարտական ուսուցման հարցերին: Բարձրացել է կոմունիստների ավանգարդային դերն ու որինակելիությունը մարտական պատրաստության և կարգապահության մեջ:

գ) Բանակի կուսկազմակերպության ղեկավարությամբ աճել և բոլշևիկորեն կոփվել է բանակային կոմսոմոլը: Վերջին յերեք տարվա ընթացքում նա կրկնապատկել է իր շարքերը, ըստ վորում աճել է բանվորական կորիզը 37,5 տոկոսից մինչև 49,3 տոկոս: Նա բարձրացրել է իր դերը, վորպես կուսկազմակերպության ոգնականի՝ նրա բոլոր աշխատանքներում և «աջակցության խմբակներից» վերակառուցվել է կոմյերիտական բջիջների:

դ) Քաղաքականապես և ռազմականապես աճել է պետկազմը: Հրամկազմի մեջ ավելացել է կուսակցական շերտը և աճել է կուսակցության ազդեցությունը անկուսակցական հրամկազմի վրա: Ամրացել է ամբողջ պետկազմի միաձուլությունը, լիովին լիկվիդացիայի յեն յենթարկվել «Բելոռուսական—Տոլմաչևյան» տրամադրությունների բոլոր մնացորդները և այժմ գոյու-



թյուն ունի պետկազմի լիակատար միաձուլություն ռազմական շինարարության բոլոր հարցերի նկատմամբ:

Նշանակալից հաջողություններ են ձեռք բերված նաև միահրամանատարության անցկացման գործում: Վորոշ հաջողություններ են ձեռք բերված քաղկազմի ռազմական պատրաստության գործում: Կուսկազմակերպությունները սկսել են մեծ ուշադրություն դարձնել հրամանատարական ուսուցմանը:

յե) Կարմիր բանակային կազմում յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հիման վրա նշանակալից չափով աճել և աճում է բանվորների և կոլխոզնիկների շերտը: Այժմ բանակ են գալիս դասակարգային խստաշունչ պայքարի դպրոցն անցած քաղաքականապես և կուլտուրապես աճած բանվորներ և գյուղացիներ: Կուսակցական և կոմյերիտական շերտը բանակի շարքային կազմում յերեք տարվա ընթացքում 17,8 տոկոսից աճել է մինչև 41 տոկոս, իսկ մի շարք զորամասերում, ծովային և ոդային նավատորմում հասնում է անձնական կազմի 70—80 տոկոսին և ավելի: Բանակի անձնական կազմի մեջ այդպիսի առաջխաղացումները հսկայական չափով բարձրացնում են նրա քաղբարոյականությունը, ամրացնում են բանակի մարտունակությունը, վորպես պրոլետարական դիկտատուրայի զենքի:

զ) Յերկրի ինդուստրացման հսկայական հաջողությունների հիման վրա աճել և աճում է բանակի հագեցումը մարտական տեխնիկայով:

է) Բանակում լայնորեն ծավալվել է սոցմրցակցությունը և դարձել է մարտական և քաղաքական պատրաստության կարևորագույն լծակ, զինվորական կար-

գաղափարայնությունն ամրացնելու խոշորագույն գործն: Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը ուժեղացնում են զորամասերի անձնական կազմի համախմբվածությունը, ամրացնում են կապը հրամանատարի և շարքային մարտիկի միջև, նպաստում են համարձակություն, վճռականություն և նախաձեռնություն մշակելու մարտիկի մեջ, բարձրացնում են նրանում պատասխանատվության զգացմունքն իր աշխատանքի համար և ավելի պատվավոր, փառապանծ ու փառավոր են դարձնում ծառայությունը Կարմիր բանակում:

## II

Բայց նվաճումների հետ միասին, դեռևս կան նաև խոշորագույն. միանգամայն անհանդուրժելի թերություններ և բացասական երևույթներ կուսկազմակերպությունների աշխատանքներում —

ա) Անբավականաչափ է առանձին կուսկազմակերպությունների դասակարգային ուշիմությունը ու աչալրջությունը, դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի նկատմամբ:

բ) Առանձին կուսակցական կազմակերպություններ ոչ բավականաչափ ուշադրությամբ են ուսումնասիրում կարմիր բանակայինների քաղաքական տրամադրությունները, ոչ միշտ իր ժամանակին պատշաճ վերաբերմունք ցույց տալիս այդ տրամադրություններին և զորահավաքի ընթացքում կարմիր բանակային մասսային ու պետկազմին կուսակցության խնդիրների շուրջը:

գ) Դեռևս ոչ բոլոր կուսբյուրոներն են կոնկրետ, գործնականապես ընդհուպ մոտեցել մարտական պատրաստության և տեխնիկային տիրապետելու հարցերին:

դ) Անբավականաչափ է ամենօրյա ուշադրությունը զինվորական կարգապահության հարցերին զորամասերում և առանձնապես կոմունիստի և կոմերիտականի օրինակելիության հարցին կարգապահության գործում: Դեռ շատ կուսկազմակերպություններ չեն սովորել իսկականի պես, բոլշևիկորեն մարտնչել բարձր զինվորական կարգապահության համար, օրինակելի, առանց մի հատիկ անգամ կարգապահական հանցանք ունեցող զորամասի և ստորաբաժանման համար:

ե) Ոչ բոլոր կուսբյուրոներն են իրենց ուշադրության կենտրոնում դրել հրամանատարական ուսուցումը, ամենօրյա ակտիվ օգնությունը հրամանատարին, նրա ռազմական ու քաղաքական պատրաստության գործում:

## III

Մեր երկրի սոցիալիզմի կառուցման հսկայական թափերի, դասակարգային սրված պայքարի, իմպերիալիստների կողմից մեզ վրա հարձակվելու սպառնալիքի պայմաններում և Կարմիր բանակի առաջ տեխնիկական հագեցման հետ կապված այժմս դրած նոր խնդիրների լույսի տակ — մեր կուսքաղաշխատանքների բոլոր նվաճումները դեռևս բավականաչափ չեն, իսկ թերությունները միանգամայն անհանդուրժելի:

Բջիջների քարտուղարների համաբանակային 3-րդ խորհրդակցությունը անհրաժեշտ է համարում վճռականապես բարելավել ամբողջ կուսքաղ աշխատանքը, նրա բովանդակությունը. ձևերն ու մեթոդները, մոտեցնել նոր և բարդ պահանջներին, որոնք առաջադրվում են բանակին նրա տեխնիկական հագեցումով և այժմ զորանոցը եկող մարտիկների քաղ. և կուլտուրական հսկայական աճմամբ: Կուսկազմակերպությունները պետք է ակտիվորեն օգնեն հրամանատարու-

թյունը՝ մարտական պատրաստության նրա բոլոր աշխատանքներում, այնպես, վորպեսզի բարձրագույն աստիճանի հասցնեն բանակի մարտական հզորությունը, վորպեսզի կարմիր բանակայիններն ու պետերի կադրը կատարելապես տիրապետեն մարտական տեխնիկային և ժամանակակից մարտի բարդ ձևերին: Միաժամանակ անհրաժեշտ է ամբողջ կուսքաղաշխատանքների վորակի բարձրացումով կարմիր բանակն— այդ առաջնակարգ քաղաքական դպրոցը— հասցնել սոցիալիզմի շրջանը թևակոխած յերկրի կողմից առաջադրվող քաղաքական և կուլտուրական աճած խնդիրների մակարդակին:

Բանակի առաջ այժմ կանգնած հսկայական խնդիրները լուծելու համար, բանակի կուսկազմակերպությունը և նրա յուրաքանչյուր բջիջը պետք է—

ա) Շարունակեն իրենց ամբողջ գործնական աշխատանքներում, ամեն որ և յուրաքանչյուր քայլափոխում անողոք և անհաշտ պայքար մղել կուսակցության գլխավոր գծի համար ընդդեմ աջ թեքման, վորպես ներկայիս գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» խոտորումների, ընդդեմ հաշտվողականների և յերկյերեսանիների:

բ) Վճռականապես բարելավել ամբողջ կուսակցական քաղաքական աշխատանքը կարմիր բանակայինների և պետկազմի մեջ: Յուրաքանչյուր կուսբջիջ միշտ և շարունակաբար պետք է ավելի լրիվ կերպով իրազեկ լինի ստորաբաժանման կամ զորամասի ամբողջ անձնական կազմի քաղաքական տրամադրություններին, արագորեն արձագանքի այդ տրամադրություններին, միշտ լինի դասակարգայնորեն ուշիմ և աչալուրջ և անդադար համախմբի մասսաներին մեր կուսակցության շուրջը, նրա գլխավոր գծի և սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների շուրջը:



գ) Քաղաքական պարապմունքները ներկա պայմաններում ձեռք են բերում բացառիկ կարևոր նշանակություն, իսկ մի շարք փաստեր վկայում են այն մասին, վոր վորոշ քաղօրգաններ և կուսկազմակերպություններ դեռևս չեն հասկացել այդ և մինչև իսկ թուլացրել են ուշադրությունը քաղպարապմունքների նկատմամբ: Ապահովելով ստույգ դասակարգային գիծը քաղպարապմունքներում, կուսկազմակերպությունները պետք է իրենց կարևորագույն խնդիրը համարեն պայքարելու՝ կարմիր բանակայինների կողմից քաղպարապմունքների բարձր յուրացման համար: Անհրաժեշտ է բարձրացնել կրտսեր հրամանատարի, խմբակավարի, քաղղեկի, կոմիսարի, քաղմարմինների պատասխանատվությունը կարմիր բանակայինների քաղաքական պատրաստականության համար:

Կուսակցական կազմակերպությունները պետք է ամեն կերպ ոգնեն քաղպարապին՝ կենսագործելու ամենորյա վերահսկողությունը քաղպարապմունքների դասավարական վորակի և կ. բանակայինների յուրացման համար ձգտելով հասնել նրան, վոր քաղպարապմունքներում և կարմիր բանակայինների պատրաստականության մեջ կոմունիստները, կոմյերիտականները առաջատար դերում լինեն:

դ) Կուսակցական կազմակերպությունները պետք է վճռականապես ուժեղացնեն իրենց աշխատանքները կարմիր բանակայինների և պետկազմի ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ ե՛լ ավելի միաձուլելու բազմազգի կարմիր բանակային մասսային և պետկազմին կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, անողոք պայքար մղելով ազգայնական տրամադրությունների զորանոց սողոսկելու

դեմ, ընդդեմ մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի և ընդդեմ տեղական նացիոնալիզմի:

*յե) Յուրաքանչյուր կուսակցական բջիջ պարտավոր է ընդհուպ մոտենալ մարտական պատրաստության կոնկրետ հարցերին, այնպես վորպեսզի կոմունիստների և կոմյերիտականների որինակելիությամբ և իսկական առաջավոր դերով, հրամատարության ակտիվ կերպով օգնելով, բանակի մարտական պատրաստությունը հասցնել չտեսնված բարձրության: Այդ պահանջում է միաժամանակ կտրականապես բարելավել կուսակցական քաղաքական աշխատանքների ամբողջ սիստեմը կարմիր բանակայինների և պետկազմի մեջ ուղղված նրանց դասակարգային դաստիարակության և կուսակցության շուրջը համախմբելուն:*

*Կուսակցական կազմակերպությունները պետք է հաստատապես հիշեն, վոր մարտական ուսուցման բարձր ցուցանիշներ նվաճելը հնարավոր է միայն մարտիկների դասակարգային բարձր գիտակցության և մեր կուսակցության շուրջը համախմբվածության դեպքում:*

*գ) Բանակի տեխնիկական հագեցումը և մարտական պատրաստության խնդիրների բարդացումը ավելի բարձր պահանջներ են առաջադրում զինվորական կարգապահության: Զորամասերի և ստորաբաժանումների կուսակցական կոմյերիտական շերտով մեծ հագեցվածության պայմաններում, վորով ոգտվում են կուսակցությունն ու կոմսոմոլը բանակում կուսակցականների և կոմյերիտականների որինակելիությունը վճռական է դառնում զինվորական կարգապահության ամրացման գործում:*

Այն կոմունիստներն ու կոմյերիտականները, վորոնք զինվորական կարգապահության բարձր որինակ չեն հանդիսանում, արժանի չեն կուսակցության և լենինյան կոմսոմոլի անդամի կոչմանը: Կուսակցական բջիջները պետք է խստորեն պայքարեն կուսակցականների և կոմյերիտականների կողմից կարգապահության ամենանվազ չափով անգամ խախտելու դեմ: Յուրաքանչյուր կուսբջիջ պարտավոր է ամեն որ և ուշադիր ուսումնասիրել կարգապահության դրությունը, ամբողջ անձնական կազմի մեջ դաստիարակչական աշխատանք ծավալել յերկաթե, հեղափոխական ռազմական կարգապահության համար:

*ե) Ընկ. Ստալինի լոզունգը*— «բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային»— *պետք է գործնականում, բանակային ամբողջ աշխատանքների պրակտիկայում դառնա ամենաարմատական լոզունգը:*

*Բանակի բոլշևիկները պետք է կատարելապես տիրապետեն մարտական տեխնիկային, վորը վճռում է բանակի կազմակերպման և տակտիկայի բոլոր հարցերը և այդ ասպարեզում որինակ դառնան բոլոր մարտիկների համար: Կուսբջիջները պետք է անդադար զորահավաքի յենթարկեն ստորաբաժանման և զորամասի ամբողջ անձնակազմը կատարելապես տիրապետելու մարտական տեխնիկային: Զենքին պետք է վոչ միայն կատարելությամբ տիրապետել, այլ հարկավոր է միաժամանակ կարողանալ խնամել այն, պահել որինակելի, մարտի համար միշտ պատրաստի դրության մեջ, և դրանում նույնպես բոլշևիկները միշտ պետք է լինեն առաջավորները և դրա համար պետք է մարտնչեն ամենայն վճռականությամբ:*

*ը) Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի մարտական և քաղաքական պատրաստության աճած խըն-*

դիրները պահանջում են կարականապես բարելավել պետկազմի ռազմական և քաղաքական վորակը: ԲԳԿԲ հրամանատարը պետք է կատարելության տիրապետի ռազմական տեխնիկային, մարտի բարդ ձևերին, զորքերը ղեկավարելու արվեստին, քաղաքականապես լինի բարձր զարգացած և ունենա ցայտուն կերպով արտահայտված կամքի հատկություններ, լինի վճռական, հաստատուն և համարձակ մարտական ղեկավարը իր զորամասի և ստորաբաժանման: Այդ այժմ յուրաքանչյուր կուսկազմակերպության, յուրաքանչյուր կուսբջիջի առաջ առանձնահատուկ ուժով հարց է դնում՝ վճռականապես լավացնել պետկազմի մեջ տարվող աշխատանքը, ոգնել նրան բոլոր աշխատանքներում և հրամանատարական ուսուցման մեջ:

Յուրաքանչյուր կուսակցական կազմակերպություն պարտավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնցում ամեն կերպ ոգնություն ցույց տրվեր հրամանատարական ուսուցմանը, վերացվեյին այն բոլորը, ինչ վոր խանգարում են նրան, և ուսուցման մեջ, տեխնիկային տիրապետելու գործում յետ մնալը ամոթ ու խայտառակություն համարվեր հրամանատարի և քաղաշխատողի համար:

Կուսկազմակերպությունները պետք է իրենց ամբողջ աշխատանքներով, իրենց ամենօրյա ճիշտ և ուշադիր վերաբերմունքով դեպի հրամանատարը, ամեն կերպ նպաստեն նրա մեջ հաստատուն կամքի, վճռականության, համարձակության, նախաձեռնության— հրամանատարի համար միանգամայն անհրաժեշտ— այդ հատկությունների ամրացմանը, առանց վորոնց հրամանատարը չի հանդիսանում իսկական հրամանատար, զորամասի մարտական ղեկավար:



Անհրաժեշտ է ապահովել քաղկազմի կողմից № 40 հրամանի լիովին կատարումը՝ ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի կողմից նշված ժամանակամիջոցում, հիշելով միաժամանակ, վոր նրա կատարումը միայն ամենաառաջին նախնական աստիճանն է հանդիսանում ամբողջ քաղաքական կազմի հետագա ռազմական վորակավորման համար:

թ) Կուսակցության մեջ լավագույն, ստուգված կուսակցությանը նվիրված կարմիր բանակայինների և հրամանատարների հետագա ներգրավումը հանդիսանում է ստորին բջիջի կենտրոնական խնդիրներից մեկը: Կուսկազմակերպությունները պետք է ուժեղացնեն քաղաքականապես ակտիվ կարգապահության մեջ որինակելի մարտական ուսուցման մեջ հաջողածային մարտիկների համալրումը կուսակցության շարքերը՝ արդյունաբերական բանվորներից, գյուղատնտեսական բանվորներից ու առաջավոր կոլխոզնիկներից: Անհրաժեշտ է ամենալայնագույն չափով կուսակցության մեջ ներգրավել կոմսոմոլի ամենալավ կադրերը: Պետք է ուժեղացնել կուսակցության մեջ նոր ընդունվածների բոլշևիկյան դաստիարակության աշխատանքները՝ նրանց գլխավորապես ներգրավելով կուսլուսավորության ցանցի մեջ և գործնական աշխատանքներում:

ժ) Բանակում կոմյերիտական կազմակերպությունների խնդիրն է— կոմյերիտականների որինակելիությունը՝ մարտական և քաղաքական ուսուցման մեջ ռազմական տեխնիկային տիրապետելու և խնամելու մեջ, զինվորական կարգապահության մեջ և կարգապահական զանցանքների լիակատար լիկվիդացիան կոմյերիտական շարքերում: Իր առաջ խնդիր դնելով 100 տոկոսով ԼԿՅԵՄ-ի մեջ ներգրավելու բոլոր բանվոր կ. բա-

նակայիններին, անհրաժեշտ է միաժամանակ լայնորեն ներգրավել իր շարքերը կոլխոզնիկներին և լավագույն, ստուգված չքավոր-անհատականներին— մարտական և քաղաքական ուսուցման հարվածայիններին: Կոմսոմոլի նկատմամբ կուսակցական ղեկավարությունը պետք է վճռականապես բարելավվի:

ժա) Լայն ծավալելով սոցմրցակցությունն ու հարվածայնությունը, ուշադրությամբ ուսումնասիրելով և ամրապնդելով կարմիր բանակայինների և պետկազմի նախաձեռնությունը, կուսակցական կազմակերպությունները պետք է կենսագործեն ամենօրյա և ամենամանրազնին ղեկավարությունը սոցմրցակցության նկատմամբ, ապահովելով հրամատարի ղեկավար դերը նրանում:

Անհրաժեշտ է վճռականապես պայքարել ֆաբրիկներից և գործարաններից սոցմրցակցության ձևերը մեխանիկորեն բանակ փոխադրելու դեմ՝ առանց հաշվի առնելու նրա բոլոր առանձնահատկությունները: Պետք է պայքարել սոցմրցակցության մեջ ամեն տեսակի նարնջայնի, կեղծ հարվածայնության և աչքակապության դեմ:

Զորամասերում կարող են և պետք է ամեն կերպ զարգանան միայն սոցմրցակցության այնպիսի ձևերը, վորոնք բարձրացնելով մարտական և քաղաքական պատրաստությունը, ամրացնելով զորամասի զորական դիսցիպլինան, միաժամանակ բարձրացնում են հրամատարի դերը, նրա հեղինակությունը, ամրացնում են հրամատարական կամքը և օգնում են նրան ղեկավարելու մարտական ուսուցումը: Զորամասերի ամբողջ կուսակցական քաղաքական աշխատանքների արմատական բարելավումը և կոնկրետ ղեկավարության խնդիրների



լուծումը պահանջում են աշխատանքի ծանրության կենտրոնը տեղափոխել վաշտը և ստորին ստորաբաժանումը: Ղեկավարության բարելավումը պահանջում է քաղմարմիններից և կուսակցական կազմակերպություններից մանրազնին կերպով գիտենալ յուրաքանչյուր ստորաբաժանման բոլոր առանձնահատկությունները, նրա նվաճումներն ու թերությունները, կուսակցական ուժերի և անկուսակցական ակտիվի հաշվառումը, նրանց ճիշտ դասավորումը, խնդիրների չերտավորված դրումը, անմիջապես օգնությունն ու ցուցումները ստորաբաժանումներին կուսակցական-քաղաքական ամբողջ աշխատանքի կազմակերպման մեջ:

Կուսակցական-քաղաքական աշխատանքի ծանրության կենտրոնը տեղափոխելով վաշտը, քաղօրգանները միաժամանակ պետք է ամրացնեն գնդային կազմակերպությունը, ամենօրյա կոնկրետ ղեկավարություն ցույց տան նրան և օգնեն ղեկավարելու ստորին կուսակցական օղակները:

* * *

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՈՒՐ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԻՐ՝ ԼԵՆԻՆՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՇՈՒՐՋԸ, ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԼՈՒԾԻ ԲՈԼՈՐ ԱՅԴ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՅԵԹԵ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՒՍԲՋԻՋԸ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՅԵՆԹԱՐԿՎԱԾ ԼԻՆԻ ՀԱՄԱՌՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ԴՐԱՆՔ, ՅԵԹԵ ՆԱ ԻՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏՎԻ ԳՈՐԾԸ ԿԴԱՐՁՆԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՅԵՎ ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ:

# ԲԱՆԱՁԵՎԵՐ
## ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Կուսակցական-կազմակերպչական աշխատանքը.
Ագիտացիոն-մասսայական աշխատանքը.
Կուսաշխատանքը Ավիազորամասերում.
Կուսաշխատանքը Մոտո-մեխանիկական զորամասերում.
Կուսաշխատանքը [illegible]երում.
Ստորին [illegible] մասին.

17892
20430-59
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

*Նախընթաց շրջանը բնորոշվում է բջիջի ակտիվացմամբ՝ իր ազդեցությամբ վաշտի (մարտկոցի, հեծելավաշտի և այլն) բոլոր աշխատանքները բազմակողմանիորեն ընդգրկելու գործում, դեպի մարտական պատրաստությունը շրջադարձ կատարելով և կազմակերպչական-կուսակցական աշխատանքների բարելավումով: Սակայն գնդային կոլեկտիվները, կուսբյուրոները և հատկապես բջիջները դեռ շատ անբավականաչափ են վերակառուցել իրենց աշխատանքների կազմակերպչական ձևերը, որոնք հարմարվեյին բանակային աշխատանքի ժամանակակից աճած և բարդացած խնդիրներին:*

*Խորհրդակցությունն անհրաժեշտ է դառնում վճռականապես բարելավել կուսակցական-կազմակերպչական աշխատանքը, հատկապես բջիջի կազմակերպչական աշխատանքը:* Կուսակցական աշխատանքը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի լիովին ապահովվի բջիջի բոլշևիկյան միաձուլության և ԲԳԿԲ մարտունակության ուժեղացման գործում նրա ակտիվ դերի հետագա աճումը, ե՛լ ավելի ամրացնի հրամանատարական կազմի կամքի հատկությունները և բարձրացնի նրա հրամանատարական դերը, ապահովի մասսաների աճող ակտիվության ճիշտ քաղաքական ղեկավարությունը:

կուսակցական–կազմակերպչական աշխատանքների բարելավումն առաջին հերթին պահանջում է.—

ա) բջիջի կոնկրետ մասնակցությունը վաշտի կյանքի, կենցաղի և աշխատանքների բոլոր հարցերում, կուսբջիջի կողմից ակտիվ ոգնություն պետկազմին՝ վաշտի մարտական և քաղաքական պատրաստության բարձրացման գործում.

բ) սիստեմատիկ աշխատանք կուսակտիվի հետ.

գ) բջիջի նախագահության և քարտուղարի կողմից ամենօրյա և կոնկրետ ղեկավարություն կուսակցության անդամների և թեկնածուների նկատմամբ.

դ) կատարումն ստուգելու փորձակի դրում՝ բջիջի աշխատանքների բոլոր գծերով.

ե) աշխատանքի պլանավորման բարելավում:

Վերոհիշյալ բոլոր խնդիրների հաջող կատարման համար անհրաժեշտ է գնդային կուսակցական–քաղաքական ապարատի հետագա ամրացում, նրա ղեկավարության կոնկրետացում վաշտերի նկատմամբ և ցուցադրանքի (паказ) ելեմենտների ուժեղացում նրա ղեկավարության մեջ: Մասնավորապես և առանձնապես անհրաժեշտ է կուսբյուրոյին կից սեկտորների աշխատանքների ամենաարագ վերակառուցում՝ բջիջին իրական ոգնություն ցույց տալու համար:

## ԲՋԻՋԻ ԺՈՂՈՎԸ

Վաշտային բջիջի ընդհանուր ժողովներ պետք է գումարվեն ամսական 2 անգամ:

Իր ժամանակին ժողովներին դնելով ընդհանուր կուսակցական հարցեր, բջիջը պետք է ավելի ևս ուժեղացնի իր ուշադրությունը վաշտի կյանքի, մարտա-



կան ուսուցման և քաղաքական պատրաստության հարցերի նկատմամբ:

Ընդհանուր ժողովների վորոշումները պետք է լինեն խորապես կոնկրետ, պետք է, վորպես կանոն, բովանդակեն կուսակցության անդամներին տրվող անհատական հանձնարարություններ, նշելով կատարման ժամկետները:

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Բջիջի նախագահության և քարտուղարի ղեկավարությունը կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի նկատմամբ պետք է անհատականացված լինի: Կուսակցության անդամներին և թեկնածուներին հանձնարարություններ տալով, նախագահությունը կամ քարտուղարը պետք է գործնականապես ցույց տան, թե ինչպես կատարել այդ հանձնարարությունը, ակտիվիստ–հարվածայիններից ումը քաշել այդ աշխատանքին մասնակցելու և այլն: Խմբակային հրահանգավորումը պետք է գործադրվի միայն իբրև անհրաժեշտ դեպքերում:

Անհրաժեշտ է նշանակալից չափով ընդլայնել բջիջի ժողովներում և նախագահության նիստերում կուսակցության անդամների և թեկնածուների անհատական հաշվետվության պրակտիկան: Առանձին ընկերների աշխատանքների քննարկումը պետք է նպատակ ունենա հաշվետու անդամի աշխատանքների հետագա լավացումը և բջիջի մնացած անդամների դաստիարակությունը, դրանով իսկ բարձրացնելով նրանց կուսակցական պատասխանատվության զգացմունքը, բարձ-

բացնելով նրանց օրինակելիությունը մարտական, քաղաքական ուսուցման և կարգապահության մեջ:

## ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Կատարման սիստեմատիկ ստուգումը հանդիսանում է բջիջի ամբողջ աշխատանքների հաջողության կարևորագույն նախապայմանը և բջիջի նախագահության և քարտուղարի ճիշտ, կենդանի և բարձրորակ ղեկավարության հիմնական պահանջը:

Կատարման ստուգումը հանդիսանում է քարտուղարի գլխավոր պարտականություններից մեկը. ստուգումը կիրառվում է անձամբ քարտուղարի կամ նախագահության անդամների կողմից:

Ստուգումը կազմակերպվում է ոչ միայն հանձնարարության ժամանակամիջոցն անցնելուց հետո, այլ և կատարման ընթացքում: Նա պետք է հայտաբերի ոչ միայն հանձնարարության կատարման փաստը, այլ և կատարման որակը:

Հանձնարարությունների կատարման ստուգումների ընթացքի և արդյունքների մասին քարտուղարը սիստեմատիկաբար հաշիվ է տալիս նախագահությունում և բջիջի ընդհանուր ժողովում:

## ԲՋԻՋԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Խորհրդակցությունը նպատակահարմար է գտնում պարտականությունների հետևյալ բաշխումը նախագահության անդամների մեջ.—

ա) բջիջի քարտուղարը—մարտական պատրաստության ապահովման հարցերը, բջիջի աշխատանքների



պլանավորումը, բջիջի ժողովի նախապատրաստումը, կուսակցական պարտականությունների և հանձնարարությունների բաշխումը, կատարման ստուգումը. կադրն ու ղեկավարությունը կոմսոմոլի բջիջի նկատմամբ, ինֆորմացիան և ընթացիկ աշխատանքը.

բ) Նախագահության յերկրորդ անդամը—ագիտացիոն-մասսայական աշխատանքը (սոցմրցակցության և հարվածայնության հաշվառումն ու ղեկավարությունը, խմբակայինի (դրուժավիկի) և անհատների աշխատանքը, լենինյան աշխատանքը, մամուլը, կամավոր ընկերությունների վաշտային լիազորների ղեկավարություն).

գ) նախագահության յերրորդ անդամը— կուսլուսավորությունը, աշխատանքը թեկնածուների հետ, անդամն կանոնավորումը և կուսակցության մեջ ընդունելությունների նախապատրաստական աշխատանքները.

դ) թեկնածուները ներգրավվում են օգնելու նախագահության անդամներին:

Նախագահության նիստերին հարցերը դրվում են անպայման նախորոք պատրաստված գործնական առաջարկներով: Բջիջի քարտուղարը պարբերաբար զեկուցում է նախագահությանը բջիջի և նախագահության ժողովների վորոշումների և վերադաս կուսօրգանների դիրեկտիվների կատարման ընթացքի մասին:

## ՍԵԿՏՈՐՆԵՐԸ ԲՋԻՋՈՒՄ

Խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում 30-ից վոչ պակաս անդամ և թեկնածու ունեցող բջիջներում

սեկտորներ ստեղծելը: Այդ բջիջներում պետք է կազմակերպվեն 3 սեկտորներ— մարտական պատրաստության, կրտսեր հրամկազմի հետ աշխատանք տանելու և մասսայական աշխատանքների:

Հանդիսանալով բջիջի նախագահության մարմինները, սեկտորներն աշխատանքը տանում են անմիջականորեն բջիջի պլանի հիման վրա: Բջիջային սեկտորներն ակտիվ մասնակցում են գնդային սեկտորների աշխատանքներին, վորոնք անց են կացվում տվյալ ստորաբաժանման մեջ:

Սեկտորների կազմը—ղեկավարը— նախագահության անդամներից մեկը, մեկ-յերկու կոմունիստից բաղկացած կորիզ, վորոնք ջոկվում են նախագահության կողմից, և տվյալ սեկտորում աշխատել ցանկացող կուսակցության այլ անդամներ և թեկնածուներ. անհրաժեշտության չափով սեկտորների աշխատանքի մեջ են ներգրավվում անկուսակցական ակտիվիստ-հարվածայինները:

## ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳՆԴԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿՆԵՐՈՒՄ

Խորհրդակցությունն անհրաժեշտ է դառնում գնդային դպրոցներում պահպանել դպրոցական բջիջները, բաժան-բաժան չանելով այն դասակների վրա և չստեղծելով դասակային կուսխմբակներ: Դասակներում աշխատանքը կազմակերպելու և անցկացնելու համար, բջիջները պետք է առանձնացնեն մշտական դասակային կուսկազմակերպիչներ:

Գնդերի մասնագիտական դասակներում, նրանցում յերեք կամ յերեքից ավելի կուսակցության անդամներ լինելու դեպքում պետք է ստեղծվեն կուսակցական բյուրոյի կողմից ղեկավարվող բջիջներ:



Այն մասնագիտական դասակներում, վորտեղ պակաս է կուսակցության անդամների թիվը, կուսաշխատանքը պետք է հանձնարարվի մյուս բջիջներին:

Այն կուսբջիջը, վորի վրա դրված է մասնագիտական դասակի սպասարկումը, առանձնացնում է կուսկազմակերպիչ (դասակի կազմից, կամ այնտեղ կոմունիստ չլինելու դեպքում— իր կազմից), վորի վրա յե դրվում աշխատանքի կազմակերպումն ու անցկացումը դասակում:

Բջիջի քարտուղարը պետք է սիստեմատիկաբար հրահանգի դասակային կուսկազմակերպչին. բջիջի նախագահությունում պետք է լսվեն նրա զեկուցումները դասակում տարվող կուսաշխատանքների դրության մասին:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՍԱԿՈՒՄ

1. Փորձը ցույց տվեց, վոր կուսաշխատանքի ստորին ողակները ծանրաբեռնվում են կազմակերպչական ձևերի բազմատեսակությամբ—խմբակայիններ, ագիտատորներ, անհատներ և այլն, վորոնց մեջ պարտականությունները բաշխված են վոչ ստույգ:

Դասակում կուսաշխատանքների կազմակերպչական ձևերի հարցը գործնականապես լուծելիս յելնել հետևյալից —

ա) ամենորյա աշխատանքը մասսայի մեջ հանդիսանում է կուսակցության յուրաքանչյուր անդամի պարտականությունը դասակում, վորպես կանոն, հատուկ ագիտատորներ և խմբակայիններ առանձնացնելու հարկ չկա.

բ) կազմակերպիչների, խմբակայինների և այլն հարցի գործնական լուծումը կախված է բջիջի թվից, զորքի տեսակից և ստորաբաժանման կառուցվածքից, մարտական ուսուցման պայմաններից և բնույթից:

Դասակային կուսկազմակերպիչները, վորպես մշտապես գործող ինստիտուտ, առանձնացվում են գնդային կուսկոլեկտիվի բյուրոյի վորոշմամբ միայն 25 մարդուց ավելի կազմ ունեցող բջիջներում: Մնացած բջիջներում կուսկազմակերպիչները պետք է առանձնացվեն միայն առանձին գործող դասակներում:

Կուսկազմակերպիչը բջիջի նախագահության (քարտուղարի) համաձայնությամբ կազմակերպում և համախմբում է դասակի կուսակցականների և կոմյերիտականների աշխատանքը:

Կոմունիստների ամրացումն առանձին անկուսակցական ընկերների, պետք է գործադրվի նպատակ ունենալով անհատապես պատրաստելու նրանց կուսակցության մեջ ընդունվելու համար:

2. Բջիջին անհրաժեշտ է.—

ա) բարձրացնել դասակի հրամանատարի դերն ու պատասխանատվությունը դասակի քաղաշխատանքների դրության համար.

բ) ուժեղացնել ամենօրյա կապը դասակի հրամանատարի հետ, այդ թվում նաև անկուսակցական դասհրամի, իր ժամանակին ծանոթացնել նրան վաշտի (մարտկոցի, հեծելավաշտի և այլն) կուսակցական-քաղաքական աշխատանքի պլաններին ու խնդիրներին, քաղ-բարոյական դրությանը.

գ) յուրաքանչյուր անգամ դաշտ դուրս գալուց առաջ անպայման կողմնորոշում տալ դասակի հրամանատարին՝ մասսայական աշխատանքների միջոցառումների առթիվ.



դ) սիստեմատիկ կերպով ստուգել դասակի հրամանատարի— կուսակցական անդամի մասնակցությունը մասսայական աշխատանքում, հասնելով նրան, վոր կուսակցական հրամանատարն օրինակ դառնա անկուսակցականի համար և բաժանի նրանց հետ իր փորձը.

ե) դասակի մարտական պատրաստության և կուսաշխատանքի դրության հաշվառման հիման վրա կուսակցության անդամներին տալ դասակային մասշտաբի աշխատանքների գործնական ցուցումներ և հանձնարարություններ:

Բացի այդ, վաշտերի հրամանատարները— միահրամանատարներն ու նրանց քաղղեկավարները (քաղղեկները) պետք է կանոնավոր կերպով անցկացնեն դասակի հրամանատարների հրահանգավորում՝ քաղաքական աշխատանքի հիմնական հարցերի շուրջը:

## ԳՆԴԱՅԻՆ ԿՈՒՍՔԱՂԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՇՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գնդային քաղապարատի ղեկավարությունը պետք է լինի կոնկրետ և չերտավորված՝ ստորաբաժանման դրության համեմատ: Կոմիսարի ղեկավարությունը պետք է հիմնվի յուրաքանչյուր վաշտի աշխատանքների դրության մասին մշտական և ստույգ իրազեկության վրա: Այդ ճանապարհով անհրաժեշտ է հասնել նրան, վոր իրոք իր ժամանակին առաջքաշվեն յետ մնացող ստորաբաժանումները և օգտագործվի լավագույնների փորձը:

Պետք է նշանակալից չափով աճի կոմխմբի և գընդային բյուրոյի կողմից անմիջական ցուցադրանքը (наказ) փաշտերի կուսքաղաշխատողներին: Դիվիզիաների քաղբաժինները պետք է օգնեն դրանում գընդային կուսքաղաշխատողներին բարձրորակ հրահանգավորման և օրինակելի ցուցադրանքի կազմակերպումով՝ քաղբաժնի ղեկավար աշխատողների ուժերով:

Հատուկ կարևորություն ունի կոմխմբի և—նրա ղեկավարության— գնդային կուսքաղապարատի բոլոր աշխատողների լավ պատրաստությունը՝ փաշտերում ցուցադրանքի համար:

Կազմակերպելով անմիջական օգնություն և ցուցադրանք փաշտերին, կոմխմբերը պետք է ե՛լ ավելի մոտ կանգնեն կուսբյուրոյի ամբողջ գործնական աշխատանքներին, մասնավորապես սեկտորների աշխատանքներին:

Խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում կուսակցության անդամ-գումարտակի, դիվիզիոնի և այլ հրամատարներին ավելի լայնորեն ներգրավելու՝ կուսակցական-քաղաքական աշխատանքների բնագավառում՝ փաշտերին օգնելու համար: Անհրաժեշտ է ավելի լայն կերպով քաղաքական աշխատանքի քաշել գումարտակների, դիվիզիոնների և այլ անկուսակցական հրամանատարներին:

Պետք է բարձրացվի կուսբյուրոյի ղեկավար աշխատանքի վորակը: Կուսբյուրոյի վոչ մի նիստ չպետք է անցնի առանց նախորոք մանրամասն կերպով նախապատրաստված կոնկրետ առաջարկությունների:



## ԿՈՒՍԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՍԵԿՏՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Խորհրդակցությունն արձանագրում է կուսբյուրոների աշխատանքների լավացումը՝ կապված սեկտորների սիստեմին անցնելու հետ: Սակայն այդ վերակառուցման դրական կողմերը իրացված են դեռևս բոլորովին վոչ լրիվ չափով: Այդ բացատրվում է մասնավորապես զանազան կազմակերպություններում սեկտորների սիստեմի խայտաբղետությամբ, իսկ վոր գլխավորն է—սեկտորներն անթույլատրելի դանդաղությամբ են անցնում փաշտային բջիջին իրական օգնություն ցույց տալուն:

Ելնելով կուտակված փորձից, խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում սեկտորների կազմակերպման ու աշխատանքների հիմքում դնել հետևյալը.—

1. Սեկտորները հանդիսանում են կուսբյուրոյի մշտական բանվորական օրգանները. սեկտորի կորիզի անձնական կազմը ջոկում է կոլեկտիվի բյուրոն. սեկտորների ղեկավարներն առաջ են քաշվում կուսբյուրոյի անդամներից: Սեկտորները լայնորեն իրենց աշխատանքների մեջ են քաշում կուսակցության անդամներին և թեկնածուներին, նույնպես և, ըստ անհրաժեշտության—անկուսակցական ակտիվիստ-հարվածայիններին: Սեկտորների աշխատանքների պլանները կառուցվում են կուսբյուրոյի պլանի հիման վրա:

2. Վորպես կանոն, կուսբյուրոյին կից պետք է ստեղծվեն հետևյալ սեկտորները.—

ա) կազմակերպչական-կուսակցական աշխատանքների.

բ) մարտական պատրաստություն.
գ) աշխատանքը պետկազմի հետ.
դ) ագիտացիոն-մասսայական աշխատանք.
յե) կուլտուր-պրոպագանդիստական աշխատանք:

3. Կազմակերպչական-կուսակցական աշխատանքների սեկտորը պետք է ընդգրկի հիմնականում հետևյալ խումբ հարցերը.—

ա) քաղօրգանների դիրեկտիվների, կոլեկտիվի և կուսբյուրոյի որոշումների կատարման ստուգումը.
բ) կուսակցական ակտիվի ռացիոնալ օգտագործումն ու համապատասխան բեռնավորումը.
գ) կուսակցության անդամների աշխատանքների ղեկավարությունը բջիջների քարտուղարների և նախագահությունների կողմից (անհատական հանձնարարություններ, հրահանգավորում, կատարման ստուգում).
դ) օգնություն բջիջներին՝ աշխատանքների պլաններ կազմելում.
յե) աճման բազայի ուսումնասիրությունը, կուսակցության մեջ հավաքագրելու աշխատանքը.
զ) աշխատանքը թեկնածուների հետ՝ նրանց գործնական կուսաշխատանքների քաշելու համար.
ե) բջիջային աշխատանքների փորձի հաշվառման կազմակերպումը.
ը) վերընտրական կամպանիաների նախապատրաստումը:

4. Մարտական պատրաստության սեկտորը.
ա) կոմանդիրների օրինակելիության բազմակողմանի ստուգումը մարտական պատրաստության և կարգապահության մեջ, և այդ բնագավառում յեղած թերությունները վերացնելու համար գործնական միջոցներ անցկացնելու մեջ.
բ) կուսկազմակերպության աշխատանքները տակտիկական պարապմունքների և մանյովրաների քաղաքական ապահովման համար.
գ) կուսկազմակերպության կոնկրետ միջոցառումների մշակումը տեխնիկայի ուսումնասիրության և յուրացման հարցերի շուրջը.
դ) աշխատանքի կազմակերպումը հրաձգային գործի շուրջը.
յե) աշխատանքը կարգապահության ամրացման համար.
զ) կարմիր բանակային մասսայի մոբիլիզացիան՝ զենքը, նյութական մասը և տեխնիկական միջոցները խնամելու համար, ստուգումն ու օգնությունը բջիջներում այդ միջոցառումներն անցկացնելու գործում.
ե) աշխատանքի կապակցումը հասարակական կազմակերպությունների, Պաշը-Ավիաքիմի, Ավտոդորի հետ (մարտական պատրաստության հետ կապված հարցերի շուրջը):

5. Պետկազմի հետ աշխատանք տանող սեկտորը.
ա) աջակցություն հրամանատարական ուսուցման բարելավմանը և քաղկազմի ռազմական կատարելագործմանը.
բ) մասնակցություն պետկազմի աշխատանքների ռացիոնալացմանը.
գ) աջակցություն պետկազմի կողմից տեխնիկայի ուսումնասիրությանն ու յուրացմանը.
դ) ակտիվ մասնակցություն՝ պետկազմի և նրանց ընտանիքների անդամների հետ տարվող կուսակցական քաղաքական աշխատանքների կազմակերպմանը.

ե) պետակազմի կուլտուրական սպասարկումը:

6. Ագիտացիոն-մասսայական աշխատանքի սեկտորը.

ա) գիրքը մարտիկին հասցնելու աշխատանքների կազմակերպումն ու ծավալումը.

բ) սոցմրցակցության և հարվածայնության կազմակերպումն ու անցկացումը, սոցմրցակցության փորձի ուսումնասիրությունը.

գ) քաղաքական կամպանիաների կազմակերպումն ու անցկացումը.

դ) ակումբների և լենանկյունների մասսայական աշխատանքը.

ե) շեֆական աշխատանքի հարցերը.

զ) համալրման շրջանների նյութերի օգտագործումը մասսայական աշխատանքում.

է) քաղաշխատանքի տեխնիկական միջոցների յուրացումը:

7. Կուլտուր-պրոպագանդիստական աշխատանքների սեկտորը.

ա) օգնություն քաղապարատին՝ քաղպարապմունքների բարելավման գործում.

բ) կուլտլուսավորության կազմակերպումը (ղեկավարների ջոկումը, կազմակերպման, հաճախելիության և պարապմունքի բովանդակության հարցերը).

գ) կուլտլուսավորության գծով ինքնապատրաստմանը և հեռակա կրթությանը հսկելը.

դ) օգնություն գիշերային դպրոցների, դասընթացների (ընդհանուր կրթական, լիկկայան և այլն) աշխատանքների կազմակերպմանը.

ե) օգնություն քաղապարատին՝ անժամկետ ար-



ձակուրդ գնացող կարմիր բանակայինների մեջ աշխատանք կազմակերպելու:

8. Տերկրային զորամասերում բոլոր սեկտորները պետք է հատուկ լուրջ ուշադրություն դարձնեն միջհավաքային աշխատանքներին:

Ֆունկցիաների բաշխումը սեկտորների միջև՝ միջհավաքային աշխատանքների բնագավառում.—

ա) կազմակերպչական-կուսակցական աշխատանքների սեկտորը—կապ՝ փոփոխիկ կազմի կուսակցականների հետ, փոփոխիկ կազմի ուսումնասիրությունը.

բ) մարտական պատրաստության սեկտորը— օգնություն հրամանատարությանը՝ ստուգելու և բարելավելու փոփոխիկ կազմի մարտական պատրաստության ձևերն ու մեթոդները միջհավաքային շրջանում, մասնակցության տեղական կազմակերպությունների կողմից տարվող միջհավաքային աշխատանքները հետապնդելու գործում.

գ) ագիտացիոն-մասսայական աշխատանքների սեկտորը—օգնություն՝ համալրման շրջանների (ռազմական անկյուններում և խմբակներում մասսայական աշխատանքների կարգավորմանը, հատկապես կոլխոզներում, սովխոզներում, ձեռնարկություններում. շրջանները մեկնող կուսակցական պետկազմին ագիտացիոն-մասսայական աշխատանքների գծով տրվող անհատական հանձնարարությունների մշակումը. մասնակցություն՝ հավաքների շրջանում միջհավաքային աշխատանքների ակտիվիստների պատրաստման գործում.

դ) կուլտուր-պրոպագանդիստական աշխատանքների սեկտորը — շրջանները մեկնող կուսակցականներին

կուսլուսավորության գծով տրվող խմբակային և անհատական հանձնարարությունների մշակումը:

9. Խորհրդակցությունը հաստատում է բջիջների քարտուղարների 2-րդ համաբանակային խորհրդակցության վորոշումը՝ միջհավաքային շրջանում վաշտային (մարտկոցային և այլն) բջիջների ցանցի պահպանման անհրաժեշտության մասին և անհրաժեշտ է համարում ամեն կերպ ուժեղացնել նրանց աշխատանքները:

10. Մինիմումի հասցնելով նիստերն ու խորհրդակցությունները, սեկտորները գլխավոր ուշադրությունը դարձնում են բջիջներին կոնկրետ օգնություն ցույց տալուն, առաջին հերթին ցուցադրանքի միջոցով, և անմիջականորեն մասնակցում են գնդային մասշտաբի միջոցառումների անցկացմանը:

Կուսբյուրոն սեկտորների առաջ դնում է միանգամայն ստույգ նպատակային խնդիրներ՝ խստորեն վորոշված ժամկետներով: Սեկտորներին հանձնարարություններ և տրվում առաջին հերթին ղեկավար օրգանների կողմից առաջադրվող հանգույցային հարցերի շուրջը, գնդի աշխատանքների և համեմատաբար ավելի թույլ ստորաբաժանումների վերաբերյալ:

Սեկտորներն իրենց աշխատանքները կատարում են ինչպես անհատական հանձնարարությունների, նույնպես և ժամանակավոր բրիգադներ, խմբակներ և այլն ստեղծելու ճանապարհով:

11. Կուսբյուրոն գնդային թերթը ղեկավարում է բյուրոյի կողմից ջոկված խմբագրի միջոցով:



## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Խորհրդակցությունը պլանավորման բարելավումը համարում է կուսակցական–քաղաքական աշխատանքները բանակի մարտական և քաղաքական պատրաստության աճած պահանջներին համապատասխան բարձր աստիճանի հասցնելու հիմնական պայմաններից մեկը:

2. Քաղաշխատանքի ամսական պլանը ներկցվում է զորամասի հրամանատարության ընդհանուր պլանին, վորպես նրա բաղկացուցիչ մասը:

Բացի այդ, գնդում կազմվում է կուսակցական աշխատանքների ամսական պլան և կոմյերիտական աշխատանքների ամսական պլան, վորոնք հաստատվում են զորամասի ռազմկոմի կողմից:

Կուսակցական և կոմյերիտական աշխատանքների պլանները կազմվում են վերադաս քաղմարմինների դիրեկտիվների հիման վրա և կապվում են զորամասի հրամանատարության պլանի հետ:

Հրամանատարության և կուսակցական–կոմյերիտական աշխատանքների պլանի հիման վրա կազմվում է ակումբի աշխատանքների օրացուցակը:

Յուրաքանչյուր պլանն իր մեջ բովանդակում է.—

ա) գնդային մասշտաբի աշխատանքի հարցերը (կոնկրետ պլան ստորաբաժանումների կենդանի ղեկավարության. ընդհանուր գնդային ժողովներ, խորհրդակցություններ, նիստեր, նշելով դրանց ժամանակը, օրակարգը, մասնակիցների կազմը, զեկուցողները, գործնական առաջարկությունների պատրաստման կարգը և այլն);

3. Վաշտում բջիջի քարտուղարը կուսբյուրոյի և վաշտի հրամանատարության պլանի հիման վրա պետք է կազմի—

ա) աշխատանքի ամսական համառոտ պլաններ.

բ) դեկադային որագրացուցակներ:

Պլանի մեջ պետք է մտցվեն բջիջի աշխատանքների համեմատաբար ավելի կարևոր գործնական հարցերը (բջիջի ժողովների որակարգի հարցերը պլանային շըրջանի համար, հարցեր նախագահության նիստերի համար, յեթե այդպիսին կա տվյալ բջիջում, հրահանգավորման աշխատանքները, աշխատանքների ստուգումը դասակներում. Համեմատաբար ավելի կարևոր անհատական հանձնարարությունները կուսակցության անդամներին): Պլանը պետք է կրի կոնկրետ, գործնական բնույթ: Պլանը նայվում է նախագահության կողմից և հաստատվում ընդհանուր ժողովի կողմից:

Դեկադային որագրացուցակում մտցվում են կուսակցական և կոմյերիտական բջիջի աշխատանքները և լենինյան ամբողջ աշխատանքները: Որագրացուցակը վաշտի հրամանատարության որացուցակի հետ միասին հասցվում են բոլոր մարտիկներին:

## ԿՈՒՍԱԿՏԻՎԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում անցկացնել—

բջիջների քարտուղարների և սեկտորների ղեկավարների միացյալ սեմինարներ՝ տարեկան յերկու անգամ.

կուսպրոցների և խմբակների ղեկավարների սեմինարներ տարեկան յերկու անգամ.



կուսակտիվի հրահանգավորում՝ կուսակցության կարևորագույն վորոշումները կյանքում գործնականապես կիրառելու և մարտական պատրաստության ապահովման հարցերի շուրջ:

Սեմինարներն ու հրահանգավորումը կայազորային մասշտաբով անց են կացվում քաղմարմինների կողմից, գնդում—ռազմկոմի, քաղոգնականի կամ կուսբյուրոյի քարտուղարի կողմից:

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արձանագրելով թեկնածուների թվի անընդհատ, արագ աճումը և նրանց ավելացումը բանակային կուսկազմակերպության կազմում (առ 1-ն ապրիլի 1931 թ.—44 տոկոս), խորհրդակցությունն ընդգծում է թեկնածուների բոլշևիկյան դաստիարակության որինակելի դրման առաջնակարգ կարևորությունը:

Կուսակցական լուսավորության գծով անհրաժեշտ է.—

ա) հասնել կուսլուսավորության ցանցում թեկնածուների 100 տոկոսային ընդգրկման և պարապմունքներին լրիվին հաճախման.

բ) կազմակերպել թեկնածուների խմբակային պատրաստության պարապմունքների համար, վորի համար բջիջները պետք է առանձնացնեն կուսակցության պատրաստված անդամներ.

գ) կուսբյուրոն և բջիջները պետք է ստուգեն թեկնածուներին կցված կուսակցության անդամներին և հրահանգավորեն նրանց:

Ամենորյա գործնական աշխատանքներում թեկնա-

ծուների դաստիարակության և աճեցման համար անհրաժեշտ է—

ա) կուսակցական պարտականություններ և հանձնարարություններ տալ թեկնածուներին, հաշվի առնելով նրանց քաղաքական զարգացման մակարդակը և գործնական աշխատանքների փորձը, ըստ վորում բջիջի քարտուղարը (կամ նախագահության անդամը) պետք է անպայման հրահանգի թեկնածուներին և ստուգի աշխատանքների կատարումը.

բ) Հատկապես մանրազնին կերպով ստուգել թեկնածուների որինակելիության աստիճանը մարտական պատրաստության, քաղուսուցման և կարգապահության մեջ, նրանց մասնակցության աստիճանը սոցիալիստական մրցակցության և հարվածայնության մեջ.

գ) լսել թեկնածուների անհատական հաշվետվությունը նախագահությունների նիստերում և բջիջների ժողովներում.

դ) ըստ անհրաժեշտության վաշտային և գնդային մասշտաբով զումարել թեկնածուների խորհրդակցություններ:

Միաժամանակ բջիջները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն թեկնածուներին իր ժամանակին կուսակցության անդամ փոխադրելու վրա:

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ

1. Խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոներին կից հետևյալ սեկտորների ստեղծումը.—

ա) կազմակերպչական աշխատանքների սեկտոր.

բ) ագիտացիոն-մասսայական աշխատանքների սեկ-



տոր, գ) ՀամԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջների հետ կապ պահող սեկտոր:

Կազմակերպչական աշխատանքների սեկտոր.—կոմյերիտական աշխատանքների պլանավորումն ու ռացիոնալացումը, կոմյերիտականների որինակելիության հարցերը կարգապահության մեջ, պարտականություններ և բեռնավորման բաշխումը, կոմսոմոլի աճման և սոցիալական կազմի կանոնավորման հարցերը, լավագույն կոմյերիտականներին կուսակցության հանձնելու նախապատրաստումը, կոմսոմոլում յեղած բացասական յերևույթների ուսումնասիրությունը և պայքարը նրանց դեմ, վերընտրական կամպանիաների նախապատրաստումը:

Ագիտացիոն մասսայական աշխատանքների սեկտորը.—մասնակցությունը քաղաքական կամպանիաների անցկացմանը, կոմսոմոլի մասսայական աշխատանքները՝ մարտական պատրաստության ապահովման համար, տեխնիկայի յուրացման և խնամման հարցերը, սոցմրցակցությունն ու հարվածայնությունը, կուսակցության և կոմսոմոլի կարևորագույն վորոշումների մշակումը, միութենական լուսավորության հարցերը, ինտերնացիոնալ դաստիարակությունը, կոմսոմոլի մասնակցությունը քաղպարապմունքներում:

ՀամԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջների հետ կապ պահող սեկտորը.—կապի կազմակերպմանը վերաբերող հարցերը. աշխատանքի փորձի փոխանակությունը, կամպանիաների միասին անցկացումը, ոգնություն արտադրական բջիջներին՝ պարտադիր ռազմական ուսուցման և ամբողջ ռազմական աշխատանքների կարգավորման գործում:

Սեկտորները պետք է գլխավորեն գնդային բյուրո-

յի անդամների կողմից և կամավորական հիմունքներով միացնեն մի վորոշ բնագավառում աշխատող կոմյերիտականների: Սեկտորների կազմը, նայած կոնկրետ խնդիրներին, փոխվում է, բացառությամբ մշտական կորիզի:

ՀամԼԿՑԵՄ բյուրոյին կից սեկտորներն իրենց ամբողջ աշխատանքը կապում են կուսբյուրոյի համապատասխան սեկտորներին:

Ստորին բջիջներում սեկտորներ չեն ստեղծվում, բացառությամբ համեմատաբար ավելի խոշոր (որինակ, գնդային դպրոցի բջիջը) բջիջներում, վորտեղ կազմակերպվում են 2—3 սեկտորներ:

2. Հաշվի առնելով կոմյերիտական շերտի նշանակալից ավելացումը զորամասերում և ստորաբաժանումներում, խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում դասակային կազմակերպիչներ առանձնացնել այն բջիջներում, վորոնց կազմը ավելի յե 35 մարդուց:

3. Խոշոր կոլեկտիվներում, վորտեղ հնարավոր չէ սիստեմատիկորեն ընդհանուր ժողովներ գումարել, հարկավոր է գործադրել պատգամավորական ժողովները:

4. Խորհրդակցությունը պարտադիր է համարում կուսակցության համեմատաբար ավելի ամուր և փորձված անդամներից ունենալ կուսակցական ներկայացուցիչ ՀամԼԿՑԵՄի բյուրոյում:

ՀամԿԿ (բ) վաշտային բջիջի նախագահությունն ու քարտուղարը կենսագործելով իրենց ղեկավարությունը կոմսոմոլի բջիջի նկատմամբ, պետք է օգնեն նրան ամենօրյա աշխատանքներում, կանոնավոր կերպով լսեն



ՀամԼԿՑԵՄ բջիջի զեկուցումները, հանելով կոնկրետ առաջարկներ:

Քաղղեկի օգնությունն ու մասնակցությունը ՀամԼԿՑԵՄ բջիջին պետք է կայանա—

ՀամԼԿՑԵՄ բջիջի նախագահության կարևորագույն ժողովների մասնակցելում.

Նախագահության նիստերում և բջիջի ժողովներում զեկուցումներ ընելում առանձին կոնկրետ հարցերի մասին, վորոնք պահանջում են զորահավաքի յենթարկել ՀամԼԿՑԵՄ բջիջի ուշադրությունը.

Կոմսոմոլի հարցերի աշխատանքների հաջող ծավալման համար վաշտում անհրաժեշտ պայմաններն ապահովելում:

## ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՆԱՎԱՏՈՐՄՈՒՄ

Խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում վերակառուցել կուսակցական աշխատանքը ծովային նավատորմում՝ համաձայն նավի մարտական կազմակերպման, վաշտային բջիջների տեղ կազմակերպելով բջիջներ մարտական և ծառայության սեկտորներին կից և խնդրել ՊՈՒՌ-ից ամենակարճ ժամանակամիջոցում այդ հարցի կոնկրետ ցուցումներ տալ ծովային նավատորմերի քաղվարչություններին:

# ԱԳԻՏԱՑԻՈՆ—ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԱԳԻՏԱՑԻՈՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. 2-րդ համաբանակային ագիտպրոպխորհրդակցությունից հետո ընկած շրջանը (1930 թ. հունիս) բնորոշվում է ագիտմասսայական աշխատանքներում յեղած վորոշ նվաճումներով: Սակայն ձեռք բերված հաջողությունները դեռ բավականչափ չեն և իրենց տեմպերով, վորակով ու բովանդակությամբ չեն համապատասխանում յերկրի սոցիալիստական շինարարության և ԲԳԿԲ վերակառուցման ժամանակակից խնդիրներին: Մասսայական աշխատանքների նկատմամբ քաղմարմինների և կուսկազմակերպությունների կողմից յեղած ղեկավարությունը դեռևս այնքան էլ բավարար չէ: Մասսայական աշխատանքների կազմակերպման և անցկացման գործում վաչտին ցույց տված գործնական օժանդակությունն ու ցուցադրանքը պարզապես անբավականաչափ է:

2. Սոցիալիստական շինարարության ժամանակակից պայմաններում մասսայական աշխատանքը կարևորագույն օղակ է հանդիսանում կուսակցական ազդեցությամբ լայն մասսաներին ընդգրկելու, նրանց հետ ամենօրյա կապի ամրացման և նրանց հարաճուն ակտիվությունը կուսակցության գլխավոր գծի շուրջը զորահավաքի յենթարկելու գործում: Կուսակցության քա-



ղաքականության հերթական խնդիրների շուրջը լայն ծըված կոնկրետ քաղաքական ագիտացիայի, միջազգային դրության հարցերի շուրջ սիստեմատիկ բացատրական աշխատանքի, սոցիալիստական մրցակցության և հարվածայնության —վորպես մասսաների դասակարգային միաձուլության և սոցիալիստական դաստիարակության կարևորագույն մեթոդի՝ հետագա ծավալման և վերջապես կուլտուրական հանգստի և խելացի զվարճությունների որինակելի կազմակերպման հիման վրա—մասսայական աշխատանքը պետք է ամբողջ կարմիր բանակային մասսայի և պետկազմի ստեղծագործական նախաձեռնությանն ուղղի կատարելու և գերակատարելու մարտական և քաղաքական պատրաստության պլանները:

Մասսայական աշխատանքի հաջողությունը պահանջում է քաղապարատի, կուսակցական-կոմյերիտական բջիջների, պետկազմի, կարմիր բանակային ակտիվի և հասարակական կազմակերպությունների ակտիվի մասնակցությունը նրա կազմակերպման գործում. ռազմկոմի և քաղղեկի պատասխանատվության վճռական բարձրացումը՝ զորամասի և ստորաբաժանման մասսայական աշխատանքների դրման համար. մասսայական աշխատանքի այն նոր ձևերի հետագա ծավալումն ու ամրացումը, վորոնք արդարացրել են իրենց ԲԳԿԲ պայմաններում:

## ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ

3. Մասսայական աշխատանքը պետք է ծավալվի զորամասի և ստորաբաժանման մարտական պատրաս-

տության պլանների կատարման համար հրամանատարու-թյան ձեռնարկած կոնկրետ միջոցառումների շուրջը:

Մարտական պատրաստության շուրջը մասսայական աշխատանքը պետք է ծավալվի միաժամանակ բարձրացնելով ագիտացիայի վորակը կուսակցության քաղաքականության հերթական խնդիրների, կարմիր բանակայինների ու պետկազմի քաղաքական շրջահայեցության լայնացման և նրանց դասակարգային աչալրջության ու գիտակցության բարձրացման շուրջը: Քաղաքական ագիտացիայի վորակի բարձրացումը՝ մինչև նրա առաջ կանգնած խնդիրների մակարդակը, պահանջում է վճռականապես ուժեղացնել ղեկավարությունը նրա նկատմամբ՝ քաղապարատի և կուսկազմակերպությունների կողմից, կոնկրետացնել նրա բովանդակությունն այնպես, վոր յուրաքանչյուր հիմնական քաղաքական հետեվություն ամրացվի միջազգային անցքերի և ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության կոնկրետ փաստերով:

4. Մարտական պատրաստության շուրջը մասսայական աշխատանքի կոնկրետ խնդիրն է—օգնել հրամատարությանը պլանը մարտիկին հասցնելու գործում: Այդ պահանջում է պարզաբանել պլանային ժամանակաշրջանի հիմնական խնդիրները և նորմատիվ ցուցանիշները հասցնել յուրաքանչյուր կատարողին՝ հետևյալ ճանապարհներով.—

ա) ցուցադրված ագիտացիայում (վահաններ, աղյուսակներ, սխեմաներ, պլաններ, լոզունգներ) լուսաբանելով առանձին աստիճանների, դեկադի, հնգօրյակի ուսուցման մարտական պատրաստության պլաններն ու խնդիրները.

բ) օգնելով ուսուցման մեջ յետ մնացող կարմիր բանակայիններին կատարելու մարտական պատրաստության կոնկրետ տեսակների շուրջ հրամանատարության տված անհատական հանձնարարությունները.

գ) օգտագործելով ռադիոհանդույցը, լուսաթերթը, աշխատանքի գեղարվեստական ձևերը, ապակենկարներ մոգական լապտերների համար (դիապոզիտիվներ).

դ) անցկացնել անհատական և խմբակային զրույցներ կուսակցականների և կոմյերիտականների հետ՝ մարտական պատրաստության պլանների շուրջը.

յե) օգտագործելով ստորին մամուլը:

5. Հրաձգային պատրաստության մեջ մարտիկների կատարելագործման ասպարեզում պետկազմին օժանդակելու համար անհրաժեշտ է պետկազմի ղեկավարությամբ լայնորեն գործադրել հրաձգա-սպորտային յերեկույթներն ու վիկտորինաները, մրցակցությունները փոքր տրամաչափի հրացաններից, դասախոսությունները, զրույցներն ու ցուցահանդեսները: Մարտական պատրաստության լավագույն արդյունքները ցուցադրելու և նրա թերությունների շուրջ ուշադրությունը զորահավաքի յենթարկելու համար անհրաժեշտ է տալ տեղեկագիր հրաձգային պատրաստության ընթացքի մասին, լուսաբանելով թերությունների պատճառները, կազմակերպել ցուցադրումներ և տալ դիագրամներ յուրաքանչյուր մարտիկի, ջոկի, դասակի, վաշտի հրաձգության արդյունքների մասին՝ առանձին վարժության և մի խումբ վարժությունների վերաբերյալ, լավագույն և վատթար թիրախների (ըստ դիպումների) ցուցադրումներ՝ կերպարանց հրաձիգների լուսանկարներով: Յետ մնացողներին օգնելու համար անհրաժեշտ է լայնորեն ծավալել հասարակական բուքսիրը ստորաբաժանումներում, դուրս չգալով վաշտի սահմաններից, և կազմակերպել նրանց հետ հատուկ զրույցներ յետ մնալու պատճառները վերացնելու համար. անհրաժեշտ

և զարգացնել իրեն արդարացրած՝ հրաձգարանների ռադիոֆիկացիան, հրաձգության արդյունքների մասին հրատարակել ռադիոբյուլետեններ հրամանատարների և գերազանց հրաձիգների ելույթներով, նույնպես և կարգավորել ագիտխմբակների աշխատանքը հրաձգարաններում:

6. Մարտական պատրաստության շուրջ մասսայական աշխատանքների բաղկացուցիչ մասն է հանդիսանում մասսայական սպորտային աշխատանքը: Ակումբներն ու լենինյան անկյունները պետք է ապահովեն մասսայական սպորտ-աշխատանքների լայն ծավալումը: Առանձնապես անհրաժեշտ է լայնորեն զարգացնել սպորտի այն տեսակները, վորոնք ուղղված են վերացնելու կարմիր բանակայինների այն ֆիզիքական պակասությունները, վորոնք խոչընդոտ են հանդիսանում մշակելու լավ հրաձգի և ֆիզիքապես դիմացկուն մարտիկի հատկությունները:

7. Տեխնիկայի պրոպագանդը պետք է ամենից առաջ ապահովի այն իր զորամասի սպառազինման մեջ ունեցած տեխնիկայի լավագույն յուրացումն ու խնամումը, Կարմիր Բանակի սպառազինման մեջ յեղած տեխնիկայի տակտիկական և տեխնիկական յուրահատկությունների գիտենալը և ծանոթությունը մեր հավանական հակառակորդների տեխնիկայի հետ: Տեխնիկայի պրոպագանդի շուրջ տարվող մասսայական աշխատանքների վորակը վորոշվում է զորամասի և ստորաբաժանման զենքի, մեքենաների և տեխնիկական միջոցների դրությամբ:

Զենքի, մեքենաների և տեխնիկական միջոցների լավագույն դրության համար մղած պայքարում պետք է լայնորեն գործադրել արդեն իրենց արդարացրած հետևյալ ձևերը—



ա) թռուցիկ միտինգների և ժողովների հրավիրումը՝ կապված ստորաբաժանում զենքի, մեքենաների և տեխնիկական միջոցների թերությունների հայտաբերման հետ և կարմիր բանակային հասարակայնության զորահավաքը՝ հայտաբերված թերությունները վերացնելու համար.

բ) սոցիալիստական մրցակցության պայմանագրերի կնքումը վերանորոգման արհեստանոցների և ստորաբաժանումների միջև՝ զենքի, մեքենաների, գործիքների նկատմամբ լավագույն խնամք կազմակերպելու համար.

գ) վերանորոգման արհեստանոցների ռացիոնալիզատորական կոնֆերանսների գումարում հարվածայինների հետ միասին՝ զենքերի, մեքենաների և այլ տեխնիկական միջոցների լավագույն վերանորոգման և խնամքի լավագույն կազմակերպման առթիվ առաջարկությունները քննելու համար.

դ) զենքերի, մեքենաների և տեխնիկական միջոցների լավագույն վիճակի վերաբերյալ վահաններ (ЩИТ և լավագույն մարտիկների ու լավագույն ստորաբաժանումների ֆոտոցուցակագրումների սարքելը:

Տեխնիկայի մասսայական պրոպագանդի տարածված ձևերը պետք է լինեն.—

ա) դասախոսություններն ու կոնսուլտացիան պետկազմի համար՝ ժամանակակից ռազմական տեխնիկայի մասին, դասախոսություններն ու զրույցները կարմիր բանակայինների հետ՝ ցուցադրելով համապատասխան կինոֆիլմեր, ապակենկարներ, նմուշներ.

բ) ռազմատեխնիկական վիկտորինաները, խաղերը, շարժական ցուցահանդեսները՝ ժամանակակից մարտական տեխնիկայի վերաբերյալ:

գ) էքսկուրսիաները դեպի տեխնիկական զորամասերը.

դ) կարճատև սեմինարները, յերեկույթները, դասընթացները, խմբակները (պետկազմի և կարմիր բանակայինների համար առանձին) ուսումնասիրելու համար ավտոտրակտորային գործը, ռադիոն, քիմիան և այլն.

յե) ավտոտրակտորային գործի հատուկ դասընթացներ և ռադիո-տեխնիկական խմբակներ մեքենատրակտորային կայաններին կից, սովխոզներում և ձեռնարկություններում՝ յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի համար.

զ) գրախոսական (բիբլիոգրաֆիական) յերեկոներ ռազմատեխնիկական գրքերի վերաբերյալ.

է) տեխնիկայի յերեկոներ և անկյուններ բազմատիրաժներում և իլյիչովկաներում:

8. Տակտիկական պատրաստության շուրջ մասսայական աշխատանքը պետք է ուղղված լինի ապահովելու մարտիկների մշտապես աճող հետաքրքրությունը ուսուցման նկատմամբ, նրանց կողմից անհրաժեշտ գիտելիքների, ունակությունների, ձևերի ու սովորքների և մարտում համագործակցության դերի ու նշանակության յուրացումը:

Տակտիկական պատրաստության ապահովման վերաբերյալ մասսայական աշխատանքը պետք է կրի սիստեմատիկ բնույթ և ծավալվի բոլոր փուլերում — նախապատրաստական շրջանում, ուսուցման պրոցեսում՝ ըստ ուսուցման ետապների շրջանավորված — և հանրագումարները տալիս: Նախապատրաստական շրջանում պետք է ծավալվի պլանը մարտիկներին հասցնելու աշխատանքը, համապատասխան կանոնագրքերը, հաշվեթերթիկների, հատուկ գրականության խմբակային մշակման աշխատանքը, նույնպես և տեխնիկա-անհատների, դասակային կուսկազմակերպիչների, կրտսեր պետկազմի, զինթղթակիցների, գրքատարների, հնարագետների հրահանգումը:



Ուսուցման պրոցեսում մասսայական աշխատանքը պետք է կենտրոնացվի անհատական և խմբակային զրույցների շուրջ՝ ուսուցման առանձին ետապների վերաբերյալ բովանդակությամբ, ագիտկետի շուրջ (ագիտասայլակին կից) պարապմունքի շրջանի պլանների հետ և իր ու «հակառակորդի» զորքերի դասավորության սխեմաների հետ, ուսուցման ընթացքի («օպերատիվ սվոդկա») մասին սիստեմատիկ ինֆորմացիայի շուրջ: Հանրագումարները ի մի բերելը պետք է տեղի ունենա հատուկ յերեկոներում, մամուլի, ներգնդային ռադիոհաղորդման, գեղարվեստական ձևերի և ցուցադրական ագիտացիայի միջոցով:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

9. Առանց կարգապահական զանցանքների ստորաբաժանման զորամասի համար մղած պայքարում մասսայական աշխատանքը պետք է վճռական տեղ բռնի: Կարգապահության ամրացման շուրջ մասսայական աշխատանքը պետք է անցկացվի հետևյալ ճանապարհներով.—

ա) լայնորեն մասսայականացնելով և պարզաբանելով կանոնագրքային պահանջները.

բ) վճռականապես դատապարտելով կարգապահական զանցանքները բջիջի, կոմսոմոլի ժողովներում և ստորաբաժանումներում, հրամանատարության միջոցառումների և բջիջի վորոշումների շուրջ ծավալելով անհատական և խմբակային ագիտացիա.

գ) լուսաբանելով ստորին մամուլում անկարգապա-հության փաստերը.

դ) մամուլի միջոցով մասսայականացնելով այն մարտիկներին ու ստորաբաժանումներին (պետկազմին և կարմիր բանակայիններին), վորոնք լավագույն ար-դյունքների յեն հասել կարգապահության ասպարե-զում:

## ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

10. Սոցմրցակցությունն ու հարվածայնությունն արդեն հսկայական դեր են խաղացել՝ մարտական պատրաստության պլանների բարձր վորակային կա-տարման ու գերակատարման և տեխնիկային տիրապե-տելու համար կարմիր բանակայինների և պետկազմի ակտիվությունը զորահավաքի յենթարկելում: Հանդի-սանալով մասսայի դասակարգային միաձուլության և սոցիալիստական դաստիարակության կարևորագույն մեթոդը, սոցմրցակցությունը պետք է ամենաուժեղ չա-փով նպաստի պետկազմի կադրերի աճմանը, վորը սոց-մրցակցության միջոցով ձեռք է բերում՝ բոլոր ուժերն ու միջոցները մարտական պատրաստության վորակի բարձրացման համար ոգտագործելու փորձ:

Կուսկազմակերպությունները ու քաղմարմինները պետք է ապահովեն պետկազմի կազմակերպիչ դերը սոցմրցակցության գործում:

Սոցմրցակցությունը ԲԳԿԲ-ում պետք է ծավալվի ուսումնական-մարտական պատրաստության՝ հրամանա-տարության կողմից հրամանով հաստատված պլանի վորակական կատարման և գերակատարման շուրջ: Մարտիկներն ու հրամանատարներն անհատական պայ-մանագրեր կնքելու և ստորաբաժանումների միջև պայ-



մանագրեր կնքելու ճանապարհով իրենց վրա պարտա-վորություն են վերցնում գերակատարել մարտական ու-սուցման նորմատիվ ցուցանիշները ըստ առանձին բնա-գավառների:

11. Սոցմրցակցության և հարվածայնության հե-տագա հաջողությունների պայմաններից մեկն է հան-դիսանում նրանց արդյունքների ճիշտ հաշվառումը և սիստեմատիկ պայքարը կեղծ հարվածայնության դեմ: Մարտական պատրաստության հանրագումարները տա-լը անպայման պետք է ուղեկցվի համապատասխան ժա-մանակաշրջանի սոցմրցակցության հանրագումարները տալով, մամուլի միջոցով նրանց լայն լուսաբանումով և բանավոր ու ցուցադրական ագիտացիայով:

Վաշտային բջիջները պետք է սիստեմատիկորեն լու-սաբանեն բոլոր կոմունիստների և կոմսոմոլիստների մաս-նակցությունը սոցմրցակցության և հարվածայնության մեջ: Կոմունիստների և կոմյերիտականների իսկական մասնակցությունը սոցմրցակցության մեջ վորոշվում է զորամասի և ստորաբաժանման մարտական պատրաս-տության պլանի կատարման վորակով:

Խորհրդակցությունն ընդգծում է կեղծ հարվածայ-նության յուրաքանչյուր կոնկրետ դեպքի դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը, վորակելով վոր-պես աչքակապություն այն զորամասերի ու ստորաբա-ժանումների հարվածային հայտարարելը, վորոնք չու-նեն բարձր նվաճումներ մարտական պատրաստության, քաղաքական ուսուցման, կարգապահության և տնտե-սական դրության ասպարեզում:

12. Սոցմրցակցության հաջողությունը նշանակալից չափով կախված է նրանից, թե վորքան ամրա-ցած լայն ռացիոնալիզատորական աշխատանքով:

Ռացիոնալիզատորական շարժումն անհրաժեշտ է վճռականապես վերակառուցել՝ պետկազմի ղեկավարության ապահովելու, հրամանատարության կողմից ռացիոնալիզատորական շարժման կոնկրետ թեմա հանձնարարություններ առաջարկելու և ռացիոնալիզատորական առաջադրությունների կենսագործման համար պետկազմի բոլոր օղակների, սկսած ջոկի հրամանատարից և բարձր, պատասխանատվության հիման վրա։ Ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման հաջողության համար կարևորագույն պայման է հանդիսանում առաջարկությունների իր ժամանակին իրացումը և պարգևատրման սիստեմը։

13. Համաբանակային 2-րդ ագիտպրոպխորհրդակցության որոշումները մասսայական աշխատանքների սիստեմում ակումբների և լենանկյունների տեղը որոշեցին որպես հենման բազա՝ լայն քաղաքական ագիտացիա և սոցիալիստական մրցակցություն ծավալելու համար քաղպարապի, կուսակցական, կոմերիտական և հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող մասսայական ռազմաքաղաքական և կուլտուրական ամբողջ աշխատանքների համար։

Դրա հետ կապված ակումբի պետի պարտականությունների հիմնական շրջանակի մեջ պետք է լինի ապահովել ամբողջ մասսայական աշխատանքը ագիտացիայի տեխնիկական և գեղարվեստական միջոցներով (կինո, ռադիո, ֆոտո, էստրադա, ցուցադրական ագիտացիա), նույնպես և ծավալել մասսայական սպորտը, էքսկուրսիոն-տուրիստական, գրադարանային և տեղեկատու աշխատանքները։

Լենինյան անկյունների գործունեության ղեկավա-



րությունն ու պարտականությունը պետք է ամբողջապես կենտրոնացած լինի քաղաքական ղեկավարների (քաղղեկականների) ձեռքին։ Սակայն այդ վոչ միայն չի բացառում, այլ ենթադրում է ակումբի սիստեմատիկ, կազմակերպչական-մեթոդական օգնությունը և գեղարվեստական միջոցները (շարժական կինո, դասախոսություններ, ապակենկարներով, կարմիր բանակային էստրադա, շարժական ցուցահանդես) պլանային կարգով վաշտը նետելու, վաշտային ինքնագործունեության ստուգատես կազմակերպելու և ցուցադրական աշխատանքների ճանապարհով։

Ակումբների և լենանկյունների աշխատանքների վերակառուցումը պետք է ուղեկցվի նրանց վճռական շրջադարձով դեպի մարտական պատրաստության հարցերը։ Մարտական պատրաստության, ռազմական տեխնիկայի յերեկոները, մարտական պատրաստության և սոցմրցակցության շուրջ ցուցադրական ագիտացիան, ռազմական գրքի յերեկոները և այլն — պետք է հիմնական և ամենագլխավոր մասը կազմեն ակումբների և լենանկյունների աշխատանքների։

14. Գեղարվեստական աշխատանքը ԲԳԿԲ-ում պահանջում է ամենօրյա ղեկավարություն քաղմարմինների և կուսակցական կազմակերպությունների կողմից։ Գեղարվեստական աշխատանքի բազմակողմանի օգտագործումը՝ կարմիր բանակայինների դասակարգային աչալրջությունն ու մարտական պատրաստությունը բարձրացնելու նպատակով և նրանց խելացի հանգըստի ու կուլտուրական հաճույքների լավագույն կազմակերպումն ամենից առաջ պահանջում է.—

ա) ավելացնել կուսակցական-կոմերիտական շերտը գեղարվեստական խմբակների և կոլեկտիվների ղե-

կավարների մեջ և ներգրավել նրանց ակտիվ աշխատանք տանելու բյուրոների մասսայական սեկտորներում.

բ) համառ աշխատանքով կոփել և կազմակերպել զորամասերում գեղարվեստական ակտիվ՝ ԼՈԿԱՖԻ բաժանմունքների, Դեղաշխի տեղական բաժինների, Կարմիր Բանակի տան կից դասընթացների և այլն օգնությամբ.

գ) զորամասերում և ստորաբաժանումներում ծավալել մասսայական գեղարվեստական աշխատանքի ավելի ճկուն ձևեր (եստրադա, յերգ, գարմոնիկաներ, հնարագետներ), վորոնք գործադրելի յեն նաև յերթա-մարտական պարագայում.

դ) կոնկրետ հանձնարարություններ ակումբի պետին և գեղարվեստական խմբակներին ու կոլեկտիվներին՝ սպասարկելու ջոկատային պարապմունքները, քաղաքական կամպանիաները, տեխնիկայի պրոպագանդը.

ե) սիստեմատիկ ղեկավարություն գեղարվեստական ինքնագործունեության նկատմամբ զորամասերում՝ ԲԳԿԲ Քաղվարչության, ռազմական շրջանների Քաղվարչությունների և ծովային ուժերի Քաղվարչությունների ագիտգեղարվեստական խմբակների միջոցով:

Այդ խնդիրների կատարումը նշանակալից չափով թեթևանում է գեղարվեստական աշխատանքների հրահանգչական-ուսուցողական կենտրոնների կազմակերպումով—Մոսկվայի Կարմիր Բանակի թատրոնը և շրջանային շարժական թատրոնները:

Խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում թատրոնների նյութական բազայի հետագա ամրացումը,



նրանց վրա հենվելը՝ կարմիր բանակային գեղարվեստական ռեպերտուար ստեղծելու աշխատանքների համար և ԲԳԿԲ զորամասերում տարվող գեղարվեստական աշխատանքների ղեկավարների պատրաստման կազմակերպումը նրանցում:

15. Կինոն, ռադիոն և ֆոտոն անհրաժեշտ է առավելագույն չափով օգտագործել հոգուտ բանակի մարտական և քաղաքական պատրաստության:

Քաղապարատը պետք է ապահովի զորամասի մասսայական աշխատանքների հիմնական խնդիրներին համապատասխան կինոֆիլմերի խիստ ընտրությունը ակումբների կողմից:

Անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ներգնդային ռադիոհաղորդումը մարտական պատրաստության և քաղաքական աշխատանքի նպատակով (գնդային ռադիոթերթերը, ինֆորմացիան՝ մարտական պատրաստության մասին, հրամանատարության զրույցները և այլն):

Հարկավոր է լայնորեն պրոպագանդ անել ֆոտոյի նշանակությունը մարտական ուսուցման համար, յելած ֆոտոապարատուրան օգտագործելով մարտական պատրաստության վերաբերյալ շարժական ցուցահանդեսների համար, ֆոտոթերթերը, վաշտային իւյիշովկաների ֆոտոնկարների ցուցադրումը և այլն և սովորեցնելու համար պետկազմին ֆոտոյի ռազմակիրարկելի օգտագործումը:

16. Քաղապարատի և կուսկազմակերպության ներկա ղեկավարությունը պետք է նշանակալից չափով ա-

վելի, քան այդ չեղել է մինչեվ այժմ, ապահովի պետկազմի, այդ թվում նաև կրտսեր պետկազմի կազմակերպիչ դերն ու ակտիվ մասնակցությունը մասսայական աշխատանքում: Կուսակցական բյուրոներն ու վաշտային կուսակցական բջիջները պետք է սիստեմատիկ կերպով լսեն մասսայական աշխատանքների կոնկրետ խնդիրները և իրենց անմիջական ղեկավարությամբ ամեն կերպ լավացնեն նրա վորակը:



## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՎԻՈԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Ռազմաոդային ուժերի զորամասերի քաղմարմիններն ու կուսակցական բջիջները դեռ լիովին չեն դարձել դեպի մարտական պատրաստությունը· նշվում է աճող պահանջներից յետ մնալու մի շարք դեպքեր և կուքաղաշխատանքը ռազմաոդային նավատորմի առանձնահատկություններին հարմարեցնելու անբավականաչափ հմտություն:

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարտական ուսուցման ժամանակակից ձևերը (գիշերային թռիչքները, կույր թռիչքները, բարձր պիլոտաժը, թռիչքը ամպերում, բարձր թռիչքները, հրաձգություն, ռմբակոծման և այլն բարձրացած ձևերն ու մեթոդները)—ավիազորամասերի կազմակերպություններից պահանջում են առանձնահատուկ խնամքով ապահովել մարտական պատրաստությունը, պահանջում են ճկունություն կուսակցական կազմակերպություններից և կարողանալ վերակառուցել շարժման ընթացքում:

1. Ստորին բջիջները պետք է զորահավաքի յենթարկեն մասսաներին նվաճելու մարտական պատրաստության բարձր տեմպեր, ուսուցման պլանների վորա-

կական-բարձր կատարում, վճռական հակահարված տալով՝ տեմպերի՝ ուժերից վեր լինելու, նրանց վոչ ռեալ լինելու, ուժերի «վատնման» և այլն մասին ոպորտունիստական տրամադրություններին: Ստորին բջիջը պետք է ոգնի հրամանատարությանը մարտական պատրաստության անհատական պլանը մինչեվ անմիջական կատարողին հասցնելում, պլանի կատարումն ստուգելում՝ ինչպես առանձին կատարողի, նույնպես և ամբողջական զորամասի կողմից, յուրաքանչյուր որ ոժանդակել լայնորեն զարգացնելու ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժումը, վճռականապես պայքարելով նյութական մասի և մարդկանց «անկործութեան մաշնելու» դեմ:

2. Քաղապարատներն ու բջիջները պետք է վճռականապես վերակառուցեն իրենց աշխատանքները, ուսուցման յուրաքանչյուր ետապը կոնկրետորեն ապահովելու ուղղությամբ: Պլանները պետք է կազմվեն— ա) եսկադրիլիայում (ոդանավախմբում)—պլան-որացույց մի ամսվա աշխատանքների համար և բ) ջոկատում—պլան-որացույց տասնորյակի համար:

Պլանները պետք է լինեն կոնկրետ և լրիվ արտացոլեն առանձին զորամասերի, ստորաբաժանումների և նրանց առանձնահատկությունների խնդիրները:

Պարկերում աշխատանքը պլանավորվում է զորական մասերի (գունդ) հետ ընդհանուր հիմունքներով:

Աշխատանքի պլանավորումն անհրաժեշտ է տանել հաշվի առնելով որացույցի յեղանակի հնարավոր փոփոխությունները, ունենալով յերկու վարիանտ (ամառային և վոչ ամառային որ):



3. Կուսակցական բջիջները պետք է ամեն տեսակետից ուսումնասիրեն և ճանաչեն յուրաքանչյուր ոդաչուի, ոդաչու-դիտողի, տեխնիկի, մոտորիստի առանձին-առանձին, նրանց անհատական առանձնահատկությունները, թույլ կողմերը՝ նրանց պատրաստության մեջ: Միայն այդ թույլ կտա իրոք կոնկրետացնելու մարտական պատրաստության ապահովման աշխատանքները, յետ մնացողներին առանձնապես յերիտասարդ ոդաչուական և տեխնիկական կազմին ընկերական ոգնություն ցույց տալու ճանապարհով:

4. Կուսակցական բջիջների ամբողջ աշխատանքներում մարտական պատրաստության հետ կապված անհրաժեշտ է լայնորեն գործադրել հասարակայնության գործահավաքը թռիչքներին պատրաստվելու, նյութական մասի խնամքի, այն անգարում և հատկապես պարկի արհեստանոցներում վերանորոգելու, վթարների դեմ պայքարելու շուրջ և այլն: Նշանակալից չափով ավելի լայն և բազմակողմանիորեն ոգտագործել մամուլը մարտական պատրաստության ամրացման համար, զորամասի ամբողջ կազմի ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնելով զորամասերի և նրանց միավորների ուսումնական-մարտական պատրաստության տվյալ ետապի համար գլխավոր ողակի և կյանքի վրա:

5. Ուսումնական պատրաստության պլանի հաջող կատարումը և վթարների բացակայությունը—լավագույն ցուցանիշներն են յուրաքանչյուր կուսբջիջի կուսակցական-քաղաքական աշխատանքների դրության:

6. Կուսակցական կազմակերպությունները և քաղապարատները աշխատանքների ամբողջ ընթացքում

պետք է հասնեն լիակատար գործնական կապվածության շտաբների աշխատանքի հետ:

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ոդային նավատորմի բարձր տեխնիկան ամենից առաջ ամբողջ անձնական կազմից պահանջում է բարձր և ստույգ կարգապահություն:

Ստույգ, խիստ զինվորական կարգապահությունը յերկրի վրա և առանձնապես օդում հանդիսանում է ռազմաօդային նավատորմի հետագա աճման և մարտական կատարելագործման անհրաժեշտ պայմանը:

1. Ստորին ջոկատային բջիջը պետք է սիստեմատիկորեն, այլ վոչ թե մեկ-մեկ զբաղվի զինվորական կարգապահության հարցերով, ձգտելով հասնել առաջին հերթին ղեկավար հրամանատարական քաղաքական և կուսակցական կազմի լիակատար օրինակելիության, կազմակերպելով պայքարը կարգապահության բոլոր խախտողների դեմ:

Ամբողջ անձնական կազմի մեջ լայն հասարակական կարծիք կազմակերպելով զինվորական կարգապահության խախտման յուրաքանչյուր դեպքի դեմ (անկարգապահների ցուցակի հրապարակումը ջոկատի ընդհանուր ժողովներում, թռուցիկ զրույցների կազմակերպում անկարգապահության առանձին դեպքերի վերլուծումով և այլն), ստորին բջիջները պետք է հատուկ պահանջկոտություն առաջադրեն ՀամԿԿ(բ) և ՀամԼԿՅԵՄ անդամների նկատմամբ:

Կուսակցական բջիջները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն թռիչքների ժամանակ զինվորական անկարգապահության դեմ պայքարելուն:



Կուսակցական կազմակերպությունները իրենց աշխատանքների ամբողջ սիստեմով պետք է ապահովեն կարգապահության այնպիսի դրություն, վորը բացառի ոդաչուական ծառայության հրահանգի իր հետեվից վթարում և խորտակում բերող խախտման ամեն մի հնարավորություն:

Քաղմարմիններին ու կուսբջիջներին անհրաժեշտ է ապահովել բարձր պահանջկոտությունը զինվորական կարգապահության հարցերում պետկազմի բոլոր ողակներից, առաջիկա շրջանում հատկապես ծանրանալով ողակի, եկիպաժի հրամանատարի և ավագ ավիատեխնիկի վրա, հասնելով նրանց օրինակելիությանը կարգապահության մեջ: Անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով զննել նրանց զեկուցումները բջիջի նիստերում և ժողովներում՝ ստորաբաժանման կարգապահության դրության և բարձր զինվորական կարգապահությունն ամրացնելու համար նրանց կողմից ձեռք առնվող միջոցների մասին:

## ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՅԵՐՈԴՐՈՄՈՒՄ ՅԵՎ ՊՈԼԻԳՈՆՈՒՄ

Կուսաշխատանքն այերոդրոմում (օդաչուական սենյակում, անգարում, ստարտում) և պոլիգոնում մինչև այժմ դրված է ծայրահեղորեն անբավարար: Հանդիսանալով մարտական պատրաստության քաղաքական ապահովման հիմնական տեղամասերից մեկը, աշխատանքն այերոդրոմում պետք է կառուցվի խիստ կոնկրետ, համաձայն յուրաքանչյուր օրվա ուսումնական-մարտական պատրաստության պլանի, չերտավորելով այն ըստ անձնակազմի առանձին խմբակների, ըստ օղակի, ջոկատի, եսկադրիլիայի:

Այերոդրոմում կուսքաղաշխատանքների հիմնական ձևերն են հանդիսանում․—

ա) ուսումնա-մարտական աշխատանքների պլանի հասցնելը մինչև առանձին ռազմիկին, տեխնիկին և մոտորիստին.

բ) անհատական խմբակային զրույցները, կապված տվյալ կոնկրետ ուսումնական հանձնարարության հետ.

գ) ռազմական-տեխնիկական պատրաստության մեթոդների և ձևերի բարելավման և կատարելագործման վերաբերյալ առաջարկների հավաքումն ու հաշվառումը.

դ) սոցմրցակցության կազմակերպումը (կարճատև).

յե) ցուցադրական ագիտացիա, որը պետք է գերազանցապես ուղղված լինի պարզաբանելու տվյալ ուսուցման խնդիրը, այդ խնդիրներն արտացոլող համապատասխան լոզունգներով, (շարժական վահաններ, համեմատաբար ավելի կարևոր քաղվածքներ կանոնադրքից և հրահանգներից և այլն).

զ) Լետուչկայի լույս ընծայումը.

է) տեղեկագրեր սոցմրցակցության կոնկրետ հանրագումարների և տվյալ ուսումնական օրվա աշխատանքների մասին:

Այերոդրոմում կուսքաղաշխատանք տանող հիմնական ուժը հանդիսանում է ՀամԿԿ(բ) ջոկատային բջիջը:

## ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ

Ռացիոնալացման և գյուտարարության հարցերի վրա, որոնք հատուկ այժմեական նշանակություն ունեն ռազմա-ուսային զորամասերում, կուսկազմակեր-



պությունները մինչև այժմ բավականաչափ ուշադրություն չեն դարձրել:

Կուսկազմակերպություններն ու քաղմարմինները պետք է—

ա) ոգնեն ռացիոնալիզատորական հանձնաժողովներին սիստեմատիկորեն ստուգելով ՀամԿԿ(բ) և Համ. ռացիո-
ԼԿՅԵՄ անդամների աշխատանքը, նրանցում,
նալիզատորական հանձնաժողովների շուրջ համախմբեն
ակտիվը և կազմակերպեն աշխատանքը նրանց հետ.

բ) կազմակերպեն առաջարկությունների հավաքումը, աջակցեն նրանց արագ վերլուծման և կյանքում կիրառելուն, կազմակերպեն փորձի փոխանակում զորամասերի միջև ռացիոնալացման առանձին հարցերի վերաբերյալ, լայնորեն օգտագործելով մամուլը, նույն հարցի շուրջ զանազան զորամասերի ռացիոնալիզատորական խմբակների միասնեղ աշխատանքը.

գ) ամեն կերպ ոգնեն հրամանատարությանը ճշտորեն կիրառելու կյանքում օրվա սահմանված կարգ ու կանոնը (պարապմունքների, թռիչքների և այերոդրոմներում, անգարներում, պոլիգոններում և այլն տարվող աշխատանքների սկսվելն ու վերջանալը):

Ստորին բջիջները պետք է ռացիոնալիզատորական և գյուտարարական աշխատանքներին տան մասսայական բնույթ, նրա մեջ քաշելով զորամասի ամբողջ անձնական կազմը:

## ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմա-ուսային ուժերի զորամասերում սոցմրցակցության և հարվածայնության հիմնական օբյեկտներ պետք է հանդիսանան—

ա) մարտական և քաղաքական պատրաստության պլանի վորակական ցուցանիշների կատարումն ու գերակատարումը (սավառնակների նյութական մասի և սպառազինման պատրաստությունն ու նրանց խնամքը, ոդաչուական աշխատանքը և հրամանատարական ուսուցումն ոդաչուական զորամասերի համար, ըստ մասնագիտությունների ապահովման ծառայության, պարկի աշխատանքները մոտորների վերանորոգման և ոդաչուական զորամասերին սպասարկելու վերաբերյալ, պարկերի կարմիր բանակայինների և պետկազմի ուսուցումը).

բ) պայքար վթարումների դեմ:

Ստորին բջիջները պետք է հատուկ շեշտ դնեն անհատական սոցմրցակցությունների, էկիպաժների սոցմրցակցության և պարկերի արհեստանոցների հարվածային բրիգադների սոցմրցակցության վրա:

Սոցիալիստական մրցակցության և հարվածայնության գործում պետկազմի ղեկավար դերի ուժեղացումը հանդիսանում է սոցմրցակցության և հարվածայնության հետագա ծավալման կարեվորագույն և վճռական նախադրյալ: Կուսակցական բջիջները պետք է ապահովեն պետկազմի այդ ղեկավար դերը:

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՎԹԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ.

Կուսակցական բջիջները դեռ ընդհուպ չեն մոտեցել վթարումների դեմ պայքար մղելու գործին: Նրանց աշխատանքն այդ ուղղությամբ դեռ կոնկրետ չի: Կոմունիստներն ու կոմյերիտականները դեռ բավականաչափ զորահավաքի չեն յենթարկված վթարումների դեմ մղվող պայքարի համար:



Ստորին կուսակցական-կոմյերիտական բջիջների աշխատանքը՝ ռազմա-ոդային ուժերում վթարումների դեմ պայքարելում պետք է արտահայտվի—

ա) ամբողջ անձնական կազմի կողմից տեխնիկային տիրապետելու համար մղվող պայքարում, վորի համար ստորին բջիջն ամեն կերպ պետք է ոգնի հրամանատարությանը հրամանատարական ուսուցման կազմակերպման և անցկացման գործում, նույնպես և մասսայական աշխատանքների կարգով կազմակերպել խմբակներ և ապահովել նրանց ժամանակով, ղեկավարներով և գրականությամբ. կուսակցական, կոմյերիտական բջիջները պետք է ՀամԿԿ(բ) և ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամից պահանջեն լավագույն կերպով իմանալ նյութական մասը, կանոնադրություններն ու ոդաչուական հրահանգները, կատարելապես տիրապետել թռչելու տեխնիկային.

բ) նյութական մասի նկատմամբ անփույթ խնամքի դեմ պայքարելում.

գ) սավառնակների նյութական մասի, մոտորների, սպառազինման և սարքավորման նկատմամբ «դիմազուրկ» խնամքի սիստեմի վճռական լիկվիդացիայի գործում հրամանատարությանը ցույց տված ոգնությամբ.

դ) վթարումները, կոտրվածքները, ստիպողական նստեցումները սքողելու և ծածկելու դեմ մղած անողոք պայքարում:

Ստորին բջիջը լիովին հաշվի առնելով վթարումների, կոտրվածքների և ստիպողական նստեցումների պատճառները, պետք է լայն հասարակական կարծիք ստեղծի նման յերևույթների դեմ:

# ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ, ՑԵՎ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

1. Պետկազմի մեջ տարվող բջիջի աշխատանքների կենտրոնական խնդիրն է հանդիսանում դաստիարակել դասակարգայնորեն կայուն, հաստատակամ և նախաձեռնություն ունեցող հրամանատար, վորն ընդունակ լինի իր աշխատանքների բոլոր բնագավառներում հայտաբերել ինքնուրույնություն իր վրա լիակատար պատասխանատվություն վերցնի ամենօրյա աշխատանքներում յեղած թերությունների դեմ պայքարելում, վորն ակտիվ և վճռական լինի իր զորամասի ղեկավարման և առաջնորդման մեջ:

2. Ավիոզորամասերի պետկազմի մեջ տարվող աշխատանքների ասպարեզում կուսկազմակերպությունների առաջ դրվում են հետևյալ խնդիրները—

ա) Ե՛լ ավելի ամրացնել պետկազմի բոլոր կատեգորիաների միաձուլությունը, լիովին իրագործել օդաչուական մասերի և պարկերի միատեղ տեղավորումը, ուժեղացնելու համար օդաչուական զորամասերի պետկազմի կապը կարմիր բանակայինների և կրտսեր մասնագետների հետ.

բ) ամրացնել կուսակցական պետկազմի կապն անկուսակցականների հետ և վերջիններիս ավելի ներգրավել հասարակական աշխատանքների մեջ.

գ) վճռական պայքար մղել քաղ-բարոյական դրության մեջ յեղած բացասական յերևույթների դեմ.

դ) ուժեղացնել քաղաքական աշխատանքը պետկազմի հետ, ուժեղացնել դասակարգային դաստիարակությունը և բարձրացնել նրա քաղաքական մակարդակը.



ե) լայնորեն կազմակերպել պետկազմի ազատ ժամանակի կուլտուրական սպասարկումը, համաձայն նրա կուլտուրական մակարդակի պահանջների, ծավալել աշխատանքը պետկազմի ընտանիքների հետ.

զ) ուժեղացնել աշխատանքը կրտսեր պետկազմի հետ, նրան ե՛լ ավելի ներգրավելով զորամասի ամբողջ քաղաքական աշխատանքների մեջ, դրա հետ միասին նրա համար պայմաններ ստեղծելով պատրաստվելու Ավիո—ԲՈՒՀ-երն ընդունվելու:

3. Հրամանատարական ուսուցումը, քաղաքական և ռազմական պարապմունքներն ապահովելու գործում կուսակցական բջիջների հիմնական ջանքերը պետք է ուղղված լինեն ամենօրյա սիստեմատիկ օժանդակություն ցույց տալու հրամանատարության հետևյալ ասպարեզներում—

ա) հրամանատարական ուսուցման պլանի կազմակերպումը և կենսագործումը.

բ) ինքնապատրաստության համար անհրաժեշտ ժամանակի ապահովումը.

գ) հրամանատարների ինքնապատրաստության կարգավորման կազմակերպումը (տանը, գրադարանում և այլն) հետագա դասընթացների ունկնդիրների և ակադեմիայի համար պատրաստվողների աշխատանքներում համապատասխան պայմանների ստեղծումը (բեռնաթափումը, ձեռնարկներով և այլն ապահովումը):

4. Կուսակցական բջիջները պետք է պետկազմի և օդաչու—տեխնիկական կազմի կուսակցական-կոմյերիտական և հասարակական պարտականություններով բեռնավորումը կանոնավորեն այնպես, վորպեսզի լիովին ապահովեն հրամանատարական ուսուցումը:

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*Ավիազորամասերում կոմսոմոլի նկատմամբ կուսակցական ղեկավարությունը, կուսկազմակերպությունների կողմից կոմյերիտական աշխատանքների կոնկրետ հարցերի ուսումնասիրությունը և օգնությունը կոմսոմոլին — դեռ միանգամայն անբավարար է:*

*Ավիազորամասերի կոմսոմոլը դեռ չի ավարտել ջոկատային բջիջներին սիստեմով վերակառուցումը:*

*Ռազմա-օդային ուժերի կուսկազմակերպությունները պետք է վճռականապես վերակառուցեն կոմսոմոլի նկատմամբ իրենց ղեկավարությունը —* կոմսոմոլի ստորին բջիջն ամրացնելու, նրան ամենօրյա օգնություն ցույց տալու, զորամասի մարտական պատրաստության և քաղաքական-բարոյական դրության մեջ յեղած թերությունները ու բացասական յերևույթները վերացնելու համար ամբողջ կոմսոմոլին զորահավաքի յենթարկելու ուղղությամբ:

*Դրա հետ միասին, կոմսոմոլի բջիջները պետք է առավելագույն չափով օգտագործել օդային նավատորմի նկատմամբ կոմսոմոլի շեֆությունը, ամրացնելու համար կապը ձեռնարկությունների կոմյերիտական կազմակերպությունների հետ:*

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՐԿՈՒՄ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՋ

*Պարկում կուսքաղաքական աշխատանքի կարևորագույն խնդիրն է հանդիսանում նյութական մասի իր ժամանակին և բարձրորակ վերանորոգումը: Պարկի կուսկազմակերպությունը պետք է—*



*ա) վերանորոգման և մատակարարման պլանը հասցնել մինչև դազգյահը·*

*բ) ծավալել սոցմրցակցության և հարվածայնության պայմանագրեր կնքելու բանվորների, ավիո-տեխնիկների, մոտորիստների, արհեստանոցների ցեխերի և պարկի ստորաբաժանումների միջև:*

*2· Ավիազորամասերի կարմիր բանակայինների մեջ տարվող աշխատանքների առանձնահատկությունները վորոշվում են նրանց առաջ կանգնած՝ պահակային ծառայությունը տանելու և ինչպես այրեդրոմի, նույնպես և պարկի տեխնիկայի հետ կապված զանազան աշխատանքների կատարման խնդիրների բնույթով:*

*Կուսակցական բջիջներին անհրաժեշտ է—*

*ա) ապահովել կանոնավոր քաղաշխատանքն ավիոպարկի կարմիր բանակայինների մեջ·*

*բ) կարմիր բանակային կազմի մեջ տարվող ամբողջ աշխատանքներում պահակային ծառայությունը ճիշտ և անթերի տանելու խնդիրը սերտորեն կապել տեխնիկայի, նյութական մասի և զենքի նկատմամբ հոգատար վերաբերմունք դաստիարակելու հետ·*

*գ) կազմակերպել պարկի կարմիր բանակային մասսայի կողմից տեխնիկային տիրապետելու աշխատանքը, լայնորեն զարգացնելով տեխնիկայի պրոպագանդը և կազմակերպելով մոտորի, ավտոմոբիլի և տրակտորի մասսայական ուսումնասիրություն:*

*Այդ խնդրի կատարումը հատուկ այժմեյականություն է ստանում կապված ռազմա-օդային ուժերի շարքային զորամասերի և դպրոցների համալրման համար կարմիր բանակայիններից տեխնիկական կադրեր պատրաստելու անհրաժեշտության հետ:*

*Ավիազորամասերում ջոկատային բջիջներին անցնելը իրեն լիովին արդարացրեց: Սակայն վերջիններս դեռ մինչև այժմ չեն դարձել ջոկատների կուսակցական-քաղաքական կյանքի իսկական ղեկավարները, չեն ընդգրկել մարտական պատրաստության ապահովման և քաղաքական դրությունը բարձր աստիճանի հասցնելու հետ կապված բարդ խնդիրներ:*

Ջոկատային բջիջների հետագա ամրացումը, նրանց դերի ուժեղացումը ջոկատում մարտական պատրաստության պլանը կատարելու քաղաքական աշխատանքի բարձր մակարդակի համար մղած պայքարում, — *այս բոլորը կարևորագույն խնդիր են հանդիսանում ավիո-զորամասերի կուսակցական կազմակերպությունների աշխատանքներում:*

*Եսկադրիլի կուսկազմակերպությունները պետք է հատուկ շեշտ դնեն ստորին ջոկատային բջիջների ղեկավարության վրա, կոնկրետ օգնություն ցույց տալով նրանց աշխատանքներում, ապահովելով այդ անհրաժեշտ ժամանակով:*

*Բազմա-տեղային ուժերի զորամասերի կուսակցական-կոմյերիտական աշխատանքների փորձն ամենայն վճռականությամբ հարց է դնում [illegible]կան միջոցառումների մասին, առաջին հերթին հենց եր՝ կուսակցական աշխատանքում:*

*Եսկադրիլի կուսակցական կոլեկտիվի բյուրոյին կից ստեղծվում են 4 սեկտորներ—* կազմակերպչական-կուսակցական, մարտական պատրաստության, մասսայական աշխատանքների և պետկազմի հետ տարվող աշխատանքների:



*Վոչ առանձին ջոկատների բջիջներում սեկտորներ չեն ստեղծվում:*

*Առանձին ջոկատների բջիջներում՝ վորոնց կազմը 30 մարդուց պակաս չէ, ստեղծվում են 3 սեկտորներ—* կազմակերպչական-կուսակցական, մարտական պատրաստության, մասսայական աշխատանքների:

*Վոչ առանձին ջոկատների և առանձին ջոկատների բջիջներն ունենում են կուսկազմակերպիչների ինստիտուտ յուրաքանչյուր ծանր էկիպաժում և կուսկազմակերպիչ՝ օղակում:*

*Կոմյերիտական բջիջներն ունենում են միայն կազմակերպիչներ՝ օղակում:*

*Ավիապարկի կուսակցական կազմակերպությունում ստորին բջիջ մնում է վաշտայինը (կոմանդայինը): Կուսակցական բջիջը կուսակցական կազմակերպիչներ է ունենում դասակներում: Պարկի կոլեկտիվի բյուրոյին կից կազմակերպվում են չորս սեկտորներ —* կազմակերպչական-կուսակցական, մարտական պատրաստության, մասսայական աշխատանքների, և պրոպագանդի սեկտոր:

*Եսկադրիլներում և ավիապարկերում կոմյերիտական բջիջներին կից ստեղծվում են 3 սեկտորներ —* կազմակերպչական, ագիտացիոն-մասսայական և կոմսոմոլի քաղաքացիական կազմակերպությունների հետ կապ պահող սեկտոր:

---

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄՈՏՈ-ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՋՐԱՀԱ—ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Մոտոմեխանիկական զորամասերի կուսքաղաշխատանքների պայմանների առանձնահատկությունները բխում են այդ զորամասերի կազմակերպման նոր լինելուց, բանվորական և կուսակցական-կոմյերիտական հագեցվածությունից, պետկազմի ավելի բարձր շերտից, նրա մարտական տեխնիկայի մեծ հագեցվածությունից և այն օպերատիվ-տակտիկական պայմաններից, վորոնցում հարկ ե լինում տանել կուսքաղաշխատանքը դաշտում (լայն մանյովրային գործողություններ, ընդհանուր զորական միավորումների և զորամասերի հետ համագործակցելում, գործողությունները թևերում, խորը հետախուզությունը, արշավը, և այլն):*

*Հսկայական շարժունակությունը, նշանակալից ինքնուրույնությունը, գործողությունները՝ մասնատված մարտական կարգերով, մարտի լարված և արագընթաց բնույթը— այս բոլորը բարդացնում և ընդգծում ե կուսակցական ղեկավարության և աշխատանքների առանձնահատկությունները. կուսակցական աշխատանքի բարձր տեմպերի ապահովման խընդիրը, ճկունությունը, շարժունակությունն ու նախաձեռնությունն այստեղ ձեռք են բերում կրկնապատիկ կարևոր նշանակություն:*



2. *Հաշվի առնելով աշխատանքի բոլոր առանձնահատկությունները մոտո-մեխանիկական զորամասերում, այդ զորամասերի կուսկազմակերպությունների ու քաղապարատը պետք ե օգտագործեն իրենց պայմաններում գործադրելի՝ ամբողջ ԲԳԿԲ կուսքաղաշխատանքի փորձը:*

## ՍՏՈՐԻՆ ԲՋԻՋԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. *Մարտական կարգերը, մարդկանց և մարտական մեքենաների փոխհարաբերությունը, առանձնապես բարձր տեխնիկական և քաղբարոյական պահանջներն առանձին մարտիկի կամ մարտիկների խմբի նկատմամբ, պահանջում են կուսակցական-կոմյերիտական ուժերը դասավորելու հատուկ հմտություն: Մարտիկների նկատմամբ անհատական-խմբակային կուսակցական ազդեցության կազմակերպման ճիշտ ձևերի ու մեթոդների ընտրությունը ձեռք ե բերում վճռական նշանակություն: Դրանով ե վորոշվում կուսակցական աշխատանքի վերակառուցման հատուկ նշանակությունը մոտո-մեխանիկական զորամասերի համար՝ կուսակցական աշխատանքի ծանրության կենտրոնը վճռականապես ստորին բջիջը փոխադրելու ուղղությամբ:*

4. *Անհրաժեշտ ե յելնել զորամասերի առանձին տիպերի համար գործադրելի՝ կուսաշխատանքի հետևյալ կառուցվածքից ու կազմակերպումից—*

*ա) առավելագույն չափով ամրացնելով, վաշտային, մարտկոցային, զրահագնացքային և ուրիշ հավասարանիշ կուսակցական և կոմյերիտական բջիջները,*

ստեղծել կուսակցական և կոմյերիտական բջիջներ բոլոր մասնագիտական առանձին դասակներում, առանձին զրահադիվիզիոնների դասակներում և առանձին ուսումնական վաշտերում:

բ) ամրացնել դասակային կուսակցական կազմակերպիչների ինստիտուտը բոլոր դասակային և հավասարանիշ ստորաբաժանումներում.

գ) առանձնացնել և ամրացնել առանձին և այլ համապատասխան կուսակցական կազմակերպիչների ինստիտուտը (դրանք հենց գրուպավիկներն են) ջոկերում, միջակ և մեծ տանկերում, զրահահարթակներում, կայարաններում, խոշոր արհեստանոցներում, գարաժներում և այլն. ավտո-փոխադրությունների ժամանակ ջոկի կուսկազմակերպիչը միաժամանակ հանդիսանում է մեքենայի կուսկազմակերպիչը.

դ) դաշտային պայմաններում, բացի վաշտի, մարտկոցի և այլն (և դասակային, որտեղ կան բջիջներ) զինթղթակցական կազմակերպիչներից, առանձնացվում են նույնպես մշտական դասակային և դրանց հավասարանիշ, զինթղթակցական կազմակերպիչներ և գրքատարներ բոլոր այն ստորաբաժանումներում, որոնք սովորաբար գործում են առանձին.

ե) կոմյերիտական կազմակերպիչներ ստեղծվում են միայն դասակային ստորաբաժանումներում:

5. Ստորին ակտիվի աճեցման աշխատանքները, մարտական ուսուցման յուրաքանչյուր ետապից առաջ ստորին օղակների սիստեմատիկ պատրաստությունը, հրահանգումը՝ յուրաքանչյուր տվյալ ուսուցման նախորեյին — հանդիսանում են կուսակցական-քաղաքական աշխատանքի անընդհատության ապահովման կարեվորագույն պայմանը, հատկապես դաշտային պայ-



մաններում: Ակտիվի ամբողջ պատրաստությունը պետք է շերտավորված և գործադրելի լինի ստորաբաժանումների և մասնագետների խմբի առանձնահատկություններին:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԻԱՁՈՒԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

6. Մոտո-մեխանիկական զորամասերի պայմանները պահանջում են հատուկ վորոշակիություն, աշխատանքներում համախմբվածություն, յուրաքանչյուր մարտիկի և հրամանատարի բարձր պատասխանատվություն: Այդ հանգամանքը կուսկազմակերպություններից պահանջում է վճռական պայքար մղել թափթփվածության, տնավարի փոխհարաբերության տարրերի դեմ, հանուն յերկաթե, հեղափոխական կարգապահության: Անհրաժեշտ է նշանակալից չափով բարձրացնել կրտսեր հրամանատարի դերը կարգապահության ամրացման գործում:

7. Հրամանատարի բարձր կամքային հատկությունների դաստիարակման խնդիրը և դրանում կուսկազմակերպությունների կողմից լիակատար աջակցությունն ու ոգնությունը մոտո-տեխնիկական զորամասերում ձեռք է բերում հատուկ կարեվոր նշանակություն:

Պետք է վճռականապես վերացվեն զինվորական կարգապահությունը հատուկ արտադրական կարգապահությանը հակադրելն արդարացնելու առանձին փորձերը: Այդ զորամասերի պայմաններում, նրանց կուս-կոմյերիտական հագեցվածության առկայությամբ կարգապահությունն ամրացնելու խնդիրը հատ-

կապես ծանրանում է կոմունիստների և կոմյերիտականների ավանգարդային դերի, նրանց օրինակելիության վրա:

8. Մարտական միաձուլության գծով կուսկազմակերպությունների կարեվորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում պայքարը մասնագետների առանձին խմբերի կղզիացման դեմ, մի մասնագիտության խմբակի համապարտ յերաշխավորության տարրերի դեմ:

9. Այդ զորամասերում առանձնապես լայն են ֆաբրիկների և գործարանների պրոլետարական ազդեցության հնարավորությունները (շեֆության, այն ձեռնարկությունների կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների կապի գծով, վորտեղից համալրված է զորամասը և այլն): Այդ իսկ տեսակետից է՛լ ավելի կարեվոր է շեֆական կազմակերպությունների ճիշտ ընտրությունը, անընդհատ և կենդանի ղեկավարությունը կուսկազմակերպությունների և քաղապարատի կողմից:

10. Այդ զորամասերի դերը, նրանց տեխնիկական բարձր հագեցվածությունը պահանջում է այդ զորամասերի կուսկազմակերպություններից և կոմսոմոլից հատակապես բարձր սուր դասակարգային աչալրջություն՝ ապահովելու համար զորամասերը խորթ տարրերի սողոսկումից և ազդեցությունից:

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՅՈՒՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՈՒՄԸ

11. Տեխնիկայի և նյութական մասի յուրացման և խնամման գործում մոտո-տեխնիկական զորամասերը պետք է օրինակ լինեն ամբողջ ԲԳԿԲ-ի համար: Կուսակցական-քաղաքական աշխատանքի խնդիրն է— բա-



լոր ուժերով օժանդակել մարտական տեխնիկայի յուրացմանը, ռազմա-տեխնիկական գիտելիքների, ռացիոնալացման ու գյուտարարության և ռազմագիտական մտքի զարգացմանը՝ ուղղված մոտո-մեխանիկական զորամասերի օպերատիվ-տակտիկական օգտագործման հարցերի մշակմանը:

12. Տեխնիկայի ուսումնասիրման գծով վորպես գործնական խնդիր, անհրաժեշտ է հրամանատարության անմիջական ղեկավարությամբ—

ա) զորամասերում տեխնիկայի ուսումնասիրության հարցերի շուրջ կազմակերպել կոնսուլտացիա, այդ նպատակով օգտագործելով Կարմիր Բանակի Տների կաբինետներն ու ուժերը·

բ) զորամասերում կազմակերպել տեխնիկայի ժամանակակից զարգացումն արտացոլող ցուցահանդեսներ·

գ) աջակցել պետական պատրաստության համար տեխնիկական կաբինետներ կազմակերպելուն·

դ) կազմակերպել տեխնիկայի ուսումնասիրության խմբակներ·

ե) անցկացնել էքսկուրսիաներ տեղական ֆաբրիկան և ճարտարագիտական պոլիգոնները, ավտոգործարանները և այլն·

զ) սիստեմատիկ զեկուցումներ դնել տեխնիկայի զանազան տեսակների ժամանակակից զարգացման մասին·

է) հատուկ ուշադրություն դարձնել տեխնիկայի ճիշտ օգտագործման և խնամման միջոցների ուսումնասիրությանը·

ը) ակտիվացնել Պաշը-Ավիաքիմի գիտա-հետազոտական աշխատանքները:

թ) կազմակերպել գիտա-հետազոտական խմբակներ՝ կոլեկտիվ կերպով մշակելու համար մոտո-մեխանիկական և զրահա-տանկային զորամասերի մարտական օգտագործման հարցերը.

ժ) մատակարարել գրադարանները նորագույն գրականությամբ. գործադրել նորագույն գրականության վերաբերյալ պլակատների, կարծիքների և ռեցենզիաների կանխելը, ռազմատեխնիկական գրականության մասին գրախոսական ցերեկները և այլն:

Այդ բոլոր աշխատանքներում ապահովել ռազմական գաղտնիքի պահպանումը:

13. Տեխնիկայի խնամման շուրջ, վորպես կոնկրետ միջոցառում, անհրաժեշտ է հրամանատարության անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ—

ա) կազմակերպել տեխնիկայի խնամման մասին. Ռազմ–Հեղ. Խորհրդի հրամանը կուսակցականների և կոմյերիտականների կողմից յուրացման և գործնական կիրառման ստուգումը.

բ) առանձին զեկուցումներ դնել կուսակցական և կոմյերիտական բյուրոներում՝ վերանորոգման ընթացքի, զարաժների դրության, նյութական մասերի ծառայության և շահագործման, վառելիքի և յուղող նյութերի խնայողության մասին, այդ ժողովներում ներգրավելով քննարկվող հարցի հետ անմիջապես կապ ունեցող կոմունիստներին և կոմյերիտականներին.

գ) չարունակաբար մամուլում արտացոլել ստորաբաժանումներում, պահեստներում և գարաժներում գտնվող զենքերի, մեքենաների և մնացած տեխնիկական գույքի դրության մեջ յեղած նվաճումներն ու թերությունները,— բոլոր թերթերում կազմակերպելով «մեքենաների խնամման և պահպանության» հատուկ բաժիններ.



դ) անցկացնել խորհրդակցություններ զանազան մասնագիտությունների մարտիկների հետ (մեքենամարների, արհեստանոցների, տեխնիկական, հրետանավորների, արհեստանոցների աշխատողների հետ), նյութային և այլ պահեստների աշխատողների հետ), նյութական մասերի և զենքի խնամքի ու պաշտպանության կան մասերի և զենքի խնամքի ու պաշտպանության աշխատանքի շուրջ կուսակցական կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով դնելով կոնկրետ հարցեր նյութական մասերի դրության մասին.

ցեր նյութական մասերի դրության մասին.

յե) գործադրել ստուգումների և մրցությունների գործադրել ստուգումների և մրցությունների չատ լավ-խմանության անցկացումը՝ խնամքի կանոնները չատ լավ խնամելու, զենքն ու նյութական մասերն ամենից լավ խնամելու և պահպանելու, շահագործական մեքենաները լավագույն կերպով վերանորոգելու շուրջ.

զ) կազմակերպել ինքնագործունեության յերեկոներ մեքենաների վերանորոգման, շահագործման, պահպանության և խնամքի հարցի շուրջ.

է) գործադրել մեքենավարների միասին խորհրդակցություններ արհեստանոցների բանվորների հետ՝ մեքենաների վերանորոգման փորձի և խնամքի հարցերի շուրջ.

ը) Մեքենաների խնամքի և խնայողության հարցի նկատմամբ զորահավաքի յենթարկել հասարակական կարծիքը և բարձրացնել վոչ միայն մեքենավարների, այլև ամբողջ ստորաբաժանման բոլոր կարմիր բանակայինների պատասխանատվությունը.

թ) վերանորոգման արհեստանոցներում հարվածային բրիգադներ ստեղծելով հասնել արտադրության աշխատանքի արտակազմակերպման բարելավման, մեքենաների վերանորոգականության բարձրացման,

րոգման լավ վորակի, պայքարել արտադրության մեջ
կորուստների դեմ և այլն, տանելով այդ աշխատանքը
հրամանատարի ղեկավարությամբ.

ժ) վերանորոգման համար անձնական պատասխա-
նատվությունը պետք է ամրացված լինի մի կողմից
մեքենավարին, մյուս կողմից վերանորոգող բրիգադին:

Զենքի, մեքենաների, տեխնիկական գույքի նկատ-
մամբ կուսակցականների և կոմերիտականների կող-
մից անփույթ վերաբերմունքի յուրաքանչյուր դեպք
պետք է քննվի բջիջում կամ բջիջի բյուրոյում, վորո-
շումը հասցնելով կուսակցականների, կոմերիտական-
ների ու անկուսակցականների ամբողջ մասսային:

Նյութական մասի և զենքի խնամման, տեխնիկա-
յին տիրապետելու շուրջ կուսկազմակերպության
ամբողջ աշխատանքը պետք է ներծծված լինի մասսա-
յական սոցմրցակցությամբ և հարվածայնությամբ:

14. Մարտիկների առանձին խմբերի մեջ նշվում է
ձգտում՝ տեխնիկան ուսումնասիրել միայն իր արտա-
դրական վորակը բարձրացնելու տեսակետից: Տեխնի-
կայի հաջող յուրացման և խնամքի պայմաններից մեկն
է հանդիսանում այդ տեսակի տրամադրության վճռա-
կան հաղթահարումը: Տեխնիկական գիտելիքների վե-
րաբերմամբ նկատվող բարձր հետաքրքրությունը պետք
է ամբողջովին և վճռականապես ուղղված լինի յուրա-
քանչյուր հրամանատարի ու մարտիկի մարտական
մարզվածությանը:

15. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի վթա-
րումների և նյութական մասի ժամանակից առաջ մաշ-
վելու դեմ պայքարին:

Կուսկազմակերպությունները պետք է ունեն պետ-
կազմին՝ վթարման յուրաքանչյուր դեպք և նրա պատ-



ճառները հասցնելու ի գիտություն բոլոր մարտիկների,
օգտագործելով այն տեխնիկայի հմուտ խնամքի կոնկ-
րետ ագիտացիայի համար:

Այդ նպատակով պետք է լայնորեն օգտագործվեն
հրամանատարության կողմից հրատարակվող բյու-
լետենները, թերթիկները, հուշաթերթերը և այլն, ա-
ռանձին վթարումների բնույթի և պատճառների նկա-
րագրությամբ:

Մեքենայի, որպես մարտական միջոցի համար,
պետք է բարձրացնել ամբողջ կուսկազմակերպության,
յուրաքանչյուր կոմունիստի և կոմերիտականի, պետ-
կազմի, յուրաքանչյուր մարտիկ-մեքենավարի պատաս-
խանատվությունը: Մեքենայի, զենքի նկատմամբ
բարեխիղճ վերաբերմունքի դաստիարակումը, կանո-
նավոր ստուգումը, լավագույն խնամքը, մեքենան վա-
րելու կանոնների պահպանելը, իր ժամանակին կազմա-
կերպված տեխնիկական հսկողությունը և ղեկավարու-
թյունը՝ վթարումների կանխման գործում ձեռք են բե-
րում վճռական նշանակություն:

Անհրաժեշտ է կուսակցական պատասխանատվու-
թյան ենթարկել այն կոմունիստներին և այն զորա-
մասերի ու ստորաբաժանումների բջիջների բյուրոների
նախագահություններին, վորոնք ձեռք չեն առել պայ-
քարի բոլոր միջոցները վթարումները կանխելու հա-
մար:

## ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

16. Մոտո-մեխանիկական զորամասերի բարձր
տեխնիկական հագեցվածությունն ամենալայն հնարա-
վորություն է տալիս սոցմրցակցության ու հարվա-
ծայնության գործադրման համար:

Մոտո-մեխանիկական զորամասերի պայմաններում նորմատիվ ցուցանիշների առաջ քաշման մեծ հնարավորությունները հարվածայնությունը դարձնում են ավելի կոնկրետ ու արդյունավետ և հատկապես տեխնիկայի ու նյութական մասի պահպանման ու խնամքի համար (պայքար վթարայնության դեմ, վառելիքի խնայողություն, վերանորոգման ժամկետների ու վորակի և այլն) և բաղային զորամասերի աշխատանքի ամբողջությամբ առած։

Հսկայական գործնական նշանակություն է ստանում այդ զորամասերում ռացիոնալացումն ու գյուտարարությունը։

17. Այդ ուղղությամբ աշխատանքի կոնկրետ առարկաներ եվ ձևեր կարող են լինել—

ա) ռացիոնալիզատորական շարժման ծավալումը նյութական մասերի խնամքի ու պահպանման շուրջ (կառուցվածքային, տեխնիկայի խնամման, խնայողության և շահագործման գծով).

բ) զինթղթակցական պոստերի կազմակերպումը ստորաբաժանումներում, գարաժներում և պահեստներում՝ նյութական մասերի և զենքի խնամքի և խնայողության հարցերի շուրջ. բրիգադների կազմակերպում՝ արհեստանոցներում կատարվող վերանորոգումների շուրջ.

գ) հրամանատարներին ոգնություն կազմակերպելը՝ ստորաբաժանումներում, պահեստներում գտնված մեքենաների, զենքի և տեխնիկական աշխատանքների վիճակն ստուգելում.

դ) աշխատանքի գյուտարարության և ռացիոնալիզատորության լավագույն օրինակների խրախուսումն ու պարգևատրումը։



Ռացիոնալացումն ու գյուտարարությունը ծավալելու կարգով անհրաժեշտ է սերտ կապ հաստատել զորամասերի և համապատասխան մարտական տեխնիկա արտադրող գործարանների միջև։

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԿԱԶՄԻ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄՅՈՒՍ ԽՄԲԵՐՈՒՄ

18. Մոտո-տեխնիկական ստորաբաժանումների և զորամասերի կազմակերպման յուրահատկությունը— բարդ զենքի զանազան տեսակների, զանազան մասնագիտությունների մարտիկների համակցումը— պահանջում է ավելի խոր տարբերակված ղեկավարություն և անհատական մոտեցում կոնկրետ խնդիրներ դնելու և աշխատանքի ձևերի ընտրության նկատմամբ՝ ոչ միայն առանձին զորամասերի, այլև առանձին ստորաբաժանումների և մարտիկների մեջ (հրաձիգներ, մոտոցիկլետիստներ, տանկիստներ, հրետանավորներ, կապավորներ, մեքենավարներ, վերանորոգող բանվորներ և այլն)։

Հատուկ ուշադրություն է պահանջում աշխատանքը մեքենավարների մեջ՝ նկատի առնելով այն դերը, որ նրանք խաղում են զորամասի գործողությունների հաջողության, նյութական մասի և տեխնիկայի խնամքի պահպանման գործում և նկատի առնելով նրանց մասնագիտական պատրաստության և աշխատանքի պայմանների առանձնահատկությունները։

Կուսկազմակերպությունն ու կոմսոմոլը պարտավոր են ամենից առաջ ոգնել պետկազմին՝ մեքենավարների մեջ դաստիարակելու լիակատար (գիտակցու-

թյունն այն բանի, վոր յուրաքանչյուր մեքենավար—վոչ թե շոֆեր է, այլ ԲԳԿԲ մարտիկ:

Կուսկազմակերպությունները պետք է օժանդակեն՝ մեքենավարների մեջ կանոնավոր քաղպարապմունքներ տանելուն. գարաժներում և գնդային արհեստանոցներում կոմունիստ-մեքենավարներից, գարաժների պետերից ջոկել կուսկազմակերպիչների կադրեր, արհեստանոցի և գարաժի ամբողջ կազմի մեջ կուսակցական աշխատանք տանելու համար. արհեստանոցներում և գարաժներում կազմակերպել կարմիր սեղաններ. ունենալ շարժական գրադարաններ մասսայական քաղաքական և տեխնիկական գրականությամբ, ունենալ տեղեկատու նյութեր, պլակատներ, ամեն օր ապահովել թերթերով: Վերևում նշված աշխատանքները դրվում են կուսակցական կազմակերպությունների վրա:

Իլյիչովկաներն ու բազմատիրաժները պետք է լուսաբանեն գարաժներում, արհեստանոցներում, մեքենավարների, վերանորոգչական բրիգադների հետ և այլ տարվող աշխատանքները:

19. Կուսկազմակերպությունների աշխատանքներում հսկայական կարևորություն է ձեռք բերում մասնագետներին գերակետի ծառայության համար հավաքագրման ապահովման խնդիրը և դերակետիկների հետ տարվող կուսակցական աշխատանքը:

## ԿՈՒՍՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

20. Ինչպես նախապատրաստության, նույնպես և հենց իրենց՝ պարապմունքների ընթացքում աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրել վաշտը, դասակը և ջոկը (մեքենան):



Կուսակցական և կոմյերիտական բջիջները պետք է նախօրոք հաշվի առնեն տակտիկական խնդիրների բընույթը և առանձին ստորաբաժանումների գործողությունը և դրան համապատասխան դասավորեն ուժերը:

Ստորաբաժանումներում քաղաշխատանքի ղեկավարության անընդհատությունն ապահովելու համար (կոմիսարի, կուսբյուրոյի, քաղղեկի կողմից և այլն) անհրաժեշտ է գործադրել— ա) անձնապես անցնելով զորասյուները, բ) առանձին կուսակցականներին կանչելով հրահանգման համար, գ) կապավորների, մոտոցիկլետիստների և այլ միջոցով տեղեկություններ տալով:

21. Մարտական ինֆորմացիայի համար լայնորեն օգտագործել բանավոր հաղորդումները մեքենայով, քաղղեկի մի մեքենայից մյուսն անցնելը, բոլոր կայանները:

Մեքենան տեղում թողնելու դեպքում (չնայած պարագային), նրանց սպասարկող կազմի հետ կապը պետք է արտահայտվի— ա) պարագայի հետ կապված, մեքենավարների կազմի և մնացած մարտիկների առաջ քաղաշխատանքի կոնկրետ խնդիրներ դնելում, բ) տեղական բնակավայրերի, ստորաբաժանման դասավորության և գնալիք տեղի հաղորդակցության ճանապարհների մասին տեղեկություններ տալում:

22. Որպես յերթում քաղաշխատանքի հիմնական ձևեր օգտագործել անհատական-խմբակային զրույցները մեքենայի վրա. կայաններում—մի խումբ մեքենաների թռուցիկ միտինգներ, կուսակցականների և կոմյերիտականների խորհրդակցություններ, մեքենաների խմբում շարժական թերթերի լույս ընծայում:

Զորամասերի և ստորաբաժանումների քաղպարա-

տի և կուսկազմակերպությունների կենտրոնական ուշադրությունը պետք է դարձված լինի աչալրջության, կարգապահության բարձրացման վրա, յերբեք կարգապահության խախտումների, անկազմակերպվածության, մեքենաներն անփույթ վարելու դեմ վճռական պայքար մղելու վրա։

23. Մեքենավարների մեջ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է հասնել նրան, վորպեսզի յուրաքանչյուր մեքենավար իմանա մարտական խնդիրները, խնայի իր մեքենան և պահի այն լիակատար մարտապատրաստությամբ, պահպանելով դաշտային պայմաններում քշելու ասույդ կանոնները։

24. Բացառիկ ուշադրություն պետք է դարձվի բանակներում քաղաշխատանքը կազմակերպելու վրա։ Հիմնական ծանրությունը պետք է կենտրոնացված լինի այդ ստորաբաժանումների կոմիր բանակայինների և պետական կողմից կոնկրետ պարապան և մարտական խնդիրները յուրացնելու վրա, ինքնապաշտպանության կազմակերպման քաղաքահովման վրա՝ «հակատանկորդի» հարձակման դեպքում, նյութական մասերը կարգի բերելու աշխատանքի վրա (զննումը, մաքրումը, յուղումը, մանր վերանորոգումը և այլն)։ Բազաներում և մեքենավարների մեջ քաղաշխատանք տանելու համար ջոկվում է կուսկազմակերպիչ՝ մեքենաների խմբի (գումարտակի) համար. այդ կուսկազմակերպիչը նախօրոք հրահանգավորվում է տվյալ պարապմունքում տանելիք իրենց աշխատանքների խնդիրների մասին։

25. Բնակված կետերում լինելու լայն հնարավորությունները, դրանց հաճախակի փոխումը պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել բնակչության մեջ տարվող աշխատանքներին։ Հաղորդակցու-



թյան ճանապարհները վերանորոգելում, լարավակոցներ, խոչընդոտներ և այլն կառուցելում և վերացնելում տեղական բնակչության կողմից զորամասերին օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը պետականից և կուսկազմակերպություններից պահանջում-են հմուտ մոտեցում բնակչությանը և նրա ակտիվության արթ զորահավաքին։

Առավելագույն չափով բարձրացնելով դասակարգային աչալրջությունը, կանխելով վնասարարությունը, պահպանելով ռազմական գաղտնիքը, պայքարելով կուլակային ոտնձգությունների դեմ, անհրաժեշտ է տեխնիկական զորամասերի դաշն օգտագործել ակտիվորեն բացատրելու համար բնակչությանը սոցիալիստական շինարարության հաջողությունները և մասսայականացնելու ԲԳԿԲ տեխնիկական հագեցվածությունը։

26. Զորամասի ռազմկոմը պարապմունքում կոնկրետ խնդիրներ է առաջադրում ավիամեքենային և նրա աշխատանքի և դասավորության ցույց է տալիս նրա կետերը։

Ավիամեքենան պետք է թերթեր և ավիագրականություն մատակարարի զորամասերին և ստորաբաժանումների մարտական տվյալներ ստանալ ստորաբաժանման մարտումներին, տվյալներ ստանալ ստորաբաժանման մարտական գործողությունների մասին և օգտագործել այդ տվյալներն իրեն՝ պարապմունքի ընթացքում։ Մարտի ժամանակ ավիամեքենան պետք է իր աշխատանքը ծավալի գլխավորապես տրանսպորտային և թեթև մեքենաների մեքենավարների մեջ, թողած պաշտպանական մասի և համապատասխան բնակավայրերում։ Ավիամեքենան իրեն շուրջ կազմակերպում է մասսայական

կարմիր բանակային ակտիվ (ագիտատորներ, պատմողներ, ընթերցողներ, զվարճությունների կազմակերպողներ) պարբերաբար հրահանգելով նրան համեմատաբար ավելի յերկարատև կանգառումներում :

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՅԼ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՈՒ ԶՈՐՔԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԸ

27. Տեխնիկական զորամասերի կուսկազմակերպություններն ու քաղապարատները պետք է ԲԳԿԲ մյուս զորամասերի կուսկազմակերպություններին աջակցեն տեխնիկայի յուրացման գործում (զեկուցումների, էքսկուրսիաների կազմակերպում, ոգնեն դասախոսներով և հրահանգիչներով, տան նյութական մասի պահպանման և ուսումնասիրության իրենց փորձը, այդ ուղղությամբ ունեցած մասսայական աշխատանքի փորձը, տեխնիկական չեֆությունը և այլն) :

Մոտո-մեխանիկական զորամասերի կուսքաղաշխատանքների փորձի թույլ մշակումը հատկապես կարևոր է դարձնում այդ զորամասերի և մասնագիտական ռազմա-ուսումնական հիմնարկների կուսկազմակերպությունների ու կոմսոմոլի քաղաշխատանքի փորձի սիստեմատիկ փոխանակումը (մամուլի, փոխադարձաբար ծանոթանալու, նյութերի փոխանակման և այլ միջոցով) :

28. Մարտիկների մասսայի բանվորական և կուսակցական-կոմյերիտական բարձր հագեցվածությունը, բարձր կուլտուրական-քաղաքական մակարդակն ու ակտիվությունը չափազանց բարձրացնում են պահանջն այդ զորամասերի կուսակցական-քաղաքական աշխատանքների վորակի նկատմամբ և կուսակցական ղեկավարության նկատմամբ առաջին հերթին :



Դրա հետ միասին, հենց մարդկային կադրի բարձր վորակը տալիս են այն բոլորը, ինչ անհրաժեշտ է կուսակազմակերպության առաջ կանգնած պատասխանատու խնդիրներն արագ և հաջողությամբ լուծելու համար :

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՌԱԶՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

### ՌԱԶՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բոլոր ՌՈՒՀ-երի (ռազմա-ուսումնական հիմնարկների) ուսանողների և ունկնդիրների մեջ բանվորական կորիզը յերկու տարվա ընթացքում աճել է մինչև 55,3 տոկոս (առ 1-ն հունվարի 1931 թ.), ընդդեմ 1929 թ. հունվարի 1-ի 41,8 տոկոսի, և կուսակցական կորիզը— մինչև 47,5 տոկոս (ընդդեմ 34,7 տոկոսի). կոմյերիտական շերտը հավասար է 37 տոկոսի։ Կուսկոմյերիտական շերտը— 84,5 տոկոս։

ՌՈՒՀ-երի կուսկազմակերպությունները ԲԳԿԲ համար ռազմականապես և քաղաքականապես բարձրորակ կադրեր պատրաստելու տեսակետից ՌՈՒՀ-երի առաջ կանգնած խնդիրներին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցելու գործում, ձեռք են բերել վորոշ հաջողություններ։

Դրա հետ միասին ՌՈՒՀ-երի աշխատանքներում դեռևս կան մի շարք խոշորագույն թերություններ։

Դրանից ամենագլխավորն է հանդիսանում բջիջների վոչ բավականաչափ կոնկրետ աշխատանքը՝ ուսումնական-մարտական և քաղաքական պատրաստության շուրջ, անբավականաչափ կարողությունը՝ յուրաքանչյուր տվյալ շրջանում մասսայի ուշադրությունն



ուսումնական-մարտական պատրաստության իրոք վճռական տեղամասերի վրա կենտրոնացնելու համար։

Ունենալով կարգապահության ընդհանրապես բավարար դրություն, ՌՈՒՀ-երը դեռ կարգապահության մեջ օրինակ չեն դարձել զորամասերի համար։ Կոմունիստներն ու կոմերիտականները ՌՈՒՀ-երում վոչ միշտ են զինվորական կարգապահության օրինակ հանդիսանում։

Ունենալով սոցիալիստական մրցակցության և հարվածայնության լայն ծավալում, նկատվում են առանձին խեղաթյուրումներ և ծռումներ (ուսուցման ժամանակաշրջանի կրճատման չհիմնավորված պլաններ, ի վնաս պատրաստության վորակի քանակային ցուցանիշների հետևից վազել)։

ՌՈՒՀ-երի առանձին ստորին բջիջներ վոչ միշտ են իր ժամանակին արձագանքում ընթացիկ մոմենտի հանգուցային քաղաքական հարցերին, անբավականաչափ են զորահավաքի յենթարկում մասսային սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրների շուրջ, ուշանում են՝ առանձին ուսանողների ոպորտունիստական տրամադրությունների և սոցիալ-տնտեսական ու ռազմական գիտությունների դասավանդման մեջ հակալենինյան խեղաթյուրումների փաստերը մերկացնելու գործում և վճռական պայքար չեն մղում ունկնդիրների և ուսանողների առանձին խմբակների կողմից քաղաքական և կուսակցական կյանքից կտրվելու դեպքերի դեմ։

Դրա հետ միասին, ՌՈՒՀ-երի բազմաթիվ ստորին բջիջներ թույլ են ուսումնասիրում ուսանողների և ունկնդիրների կազմը և իր ժամանակին չեն հայտաբե-

*րում ՌՈՒՀ-երը աղտոտած՝ դասակարգայնորեն խորթ տարրերին:*

2. *Համաձայն նրա, որ կադրերի պրոբլեմը ներկա շրջանում բանակի համար ունի բացառիկ նշանակություն,—բոլոր աստիճանի ՌՈՒՀ-երի կուսկազմակերպությունների կենտրոնական խնդիրն է հանդիսանում* ապահովել ԲԳԿԲ պետկազմի բարձրորակ և ամբողջապես պրոլետարական հեղափոխության գործին նվիրված կադրերի պատրաստությունը, կադրեր, վորոնք ունենն ուժեղ կամք, նախաձեռնություն, լինեն հաստատուն և համառ, կատարելապես տիրապետեն մարտական տեխնիկային, ընդունակ լինեն ղեկավարելու մարտը նրա բարդ, ժամանակակից ձևերով և կարողանան այդ հիման վրա ղեկավարել մարտիկների ռազմական և քաղքական ուսուցումը:

*Այդ բջիջներից պահանջվում է—*

*ա) իր աշխատանքների ամբողջ սիստեմով ամենայն զորահավաքի յենթարկել ուսանողների, ունկընդիրների և դասավանդողների ուժերն ու ուշադրությունը բարձրացնելու համար ամբողջ ուսումնական-մարտական պատրաստության և տակտիկական վարժվածության վորակը,* ուսանողներից (ունկընդիրներից) մշակելու որինակելի, իրենց գործն իմացող հրամանատարներ. ուսանողների (ունկընդիրների) կողմից՝ նոր սպառազինումներին ու նոր տեխնիկային տիրապետելու և նրանց կողմից իր զենքն ու տեխնիկան խնամելու.

*բ)* համառ աշխատանք ուսանողների և ունկընդիրների բոլշևիկյան դաստիարակության և տեսական մարքսիստական-լենինյան պատրաստության համար. դասակարգային աչալրջության բարձրացում և անհաշտ պայքար ուսումնական և գիտական-տեսական աշ-



խատանքում մարքսիզմ-լենինիզմի թշնամի հայացքների ապստահայտությունների դեմ:

*գ) ակտիվ օգնություն հրամանատարությանը վերակառուցելու ՌՈՒՀ-երում դասավանդման մեթոդները՝ ԲԳԿԲ զորամասերի մարտական և քաղաքական պատրաստության պրակտիկայի հետ դրանց անխզելի կապի և ուսուցման հնացած լիովին արմատախիլ անելու անկյան տակ:*

*դ) վճռականապես ապահովել ամենորյա դաստիարակության, ներքին կարգ ու կանոնի, պահանջկոտության և կարգապահության այնպիսի սիստեմ, վորը նպաստեր մշակելու* ուսանողների և ունկընդիրների մեջ ԲԳԿԲ հրամանատարի և քաղաշխատողի բարձր կամքային հատկություններ:

*Յուրաքանչյուր բջիջ պետք է ամենամանրազնին կերպով ուսումնասիրի ուսանողների և ունկընդիրների անձնական կազմը* ճանաչի նրանցից յուրաքանչյուրին և հայտաբերի դասակարգայնորեն անհարազատ տարրերին: Բջիջը և նրա ղեկավարությունն իրենց վրա յեն կրում կուսակցական ամբողջ պատասխանատվությունն իր ժամանակին խորթ տարրերին չմերկացնելու համար:

*Դրա հետ միասին, ռազմական ակադեմիաների և կատարելագործման դասընթացների կարևորագույն խնդիրն է հանդիսանում ապահովել կայուն մարքսիստական-լենինյան գիծը գիտական աշխատանքում և գիտական աշխատանքի մարտական շրջադարձը դեպի ընթացիկ ռազմական շինարարության արդիական հրատապ խնդիրները:*

*Կոմունիստների և կոմյերիտականների բացահայտ գերակշռությունը ՌՈՒՀ-երի ուսանողական և ունկնդրական կազմի մեջ ապահովում է անհրաժեշտ պայմաննե-*

րը՝ առաջադրված խնդիրներն ամենակարճ ժամանակամիջոցում կենսագործելու համար և դրանով իսկ ԲԳԿԲ-Ռուհ-երում կադրերի պատրաստության ամբողջ սիստեմը վճռականապես բարելավելու համար:

Ռուհ-ի յուրաքանչյուր բջիջի և յուրաքանչյուր կոլեկտիվի աշխատանքը պետք է գնահատվի ամենից առաջ ելնելով նրանից, թե ինչ դրության մեջ է տվյալ Ռուհ-ում ամբողջապես և նրա ստորաբաժանումներում ուսումնական – մարտական պատրաստությունը, քաղաքական վիճակը և կարգապահությունը:

## ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Նշված խնդիրների կատարման նախադրյալ է հանդիսանում Ռուհ-երի կուսակցական աշխատանքի ձևերի, մեթոդների և տեմպերի վերակառուցման արագացումը: Ուսումնական – մարտական պատրաստության գործում Ռուհ—ի բջիջի կողմից հրամանատարության ցույց տրվող օժանդակությունը պետք է արտահայտվի՝ ուսուցման կարեվորագույն կողմերի կուսակցական – քաղաքական կոնկրետ ապահովումով: Այդ ամենից առաջ պահանջում է իրոք ակտիվացնել ամբողջ բջիջը, վերածել այն Ռուհ—ում տարվող կուսակցական աշխատանքի հիմնական օղակի:

Մինչև այժմ գոյություն ունեցող այն կարգը, ըստ վորի ուսումնա-մարտական պատրաստության բոլոր հիմնական հարցերը քննվում են միայն բյուրոյում և Ռուհ—ի կոլեկտիվի ժողովում, պետք է փոխվի: Ամբողջ աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է փոխադրվի բջիջը:



Բջիջը պետք է մանրազնին կերպով ուսումնասիրի ուսումնա-մարտական և քաղաքական պատրաստության առանձին ընդգրկվածները, իր ժամանակին նախազգուշացնի և ազդանշան տա ղեկավարությանը՝ ծրագրերում, հանձնարարություններում, դասագրքերում և դասավանդման մեթոդներում յեղած թերությունների մասին և առաջադրել բոլոր թերությունների վերացման ուղղված կոնկրետ առաջարկություններ: Այդ նըպատակով, բջիջը ամբիոնների, կուրսային և մեթոդական խորհրդակցությունների և այլն աշխատանքների նկատմամբ իր ամենօրյա ուշադրությունն ուժեղացնելու հետ միասին, պետք է գործադրի կուրսային հրամանատարների, ամբիոնների, առանձին դասավանդողների և ուսումնական բաժինների (մասերի) զեկուցումների պարբերաբար լսելը:

Ուսումնական – մարտական քաղաքական պատրաստության և կարգապահության հարցերը պետք է բջիջի աշխատանքների պլաններում բռնեն գլխավոր տեղը և սերտորեն կապվեն ընդհանուր կուսակցական խնդիրների հետ: Միայն կուսակցության գլխավոր գծի համար ոպորտունիզմի բոլոր տեսակների և դրա նկատմամբ հաշտվողականության դեմ անընդհատ վճռական պայքարի հիման վրա, ուսանողական (ունկնդրական) մասսայի առաջ սոցիալիստական շինարարության և ԲԳԿԲ կուսակցական-քաղաքական աշխատանքի հերթական խնդիրներն իր ժամանակին դնելու հիման վրա Ռուհ-երի բջիջները կարող են ճիշտ դնել և լուծել ուսանողների ուսումնա-մարտական պատրաստության և ունկընդիրների մարքսիստական-լենինյան դաստիարակության հարցերը:

Բուհ-ի կոլեկտիվի բյուրոյի պլանները պետք է կազմվեն յեռամսյակներով (ձմեռային շրջանում) և ըստ ամիսների (ամառը): Պլան-օրացույցները կազմվում են կոլեկտիվի բյուրոյի կողմից մի ամսվա համար: Ստորին բջիջները կազմում են որիենտիր ամսական պլաններ և դեկադային օրացույցներ:

4. Բուհ-երի կոմունիստների և կոմյերիտականների իրական մասնակցությունը սոցմրցակցության և հարվածայնության մեջ պետք է վորոշվի համապատասխան ուսումնական խմբերի և ամբողջությամբ առած կուրսերի ուսումնական պլանների կատարման բարձր վորակով:

Կուսակցական պարտականությունների բաշխումը կոմունիստ-ուսանողների և ունկնդիրների մեջ պետք է կատարվի այնպես, վոր նա ամենից առաջ ապահովի նրանց դերը՝ վորպես ուսուցման ու կարգապահության մեջ առաջամարտիկների: Կուսակցական և հասարակական աշխատանքով առանձին ընկերների չափազանց ծանրաբեռնումը ի վնաս ուսուցման, անմիջապես պետք է վերացվի:

Բուհ-ում սոցմրցակցության և հարվածայնության ծանրության կենտրոնը պետք է լինի՝ ուսումնա-մարտական և քաղաքական պատրաստության վորակի, տեխնիկային տիրապետման և խնամքի, հրաձգային որինակելի պատրաստության և կարգապահության բարձր վորակի համար մղած պայքարը: Հարվածային պարտավորությունները պետք է կառուցվեն յուրաքանչյուր առանձին ուսանողին (ունկնդրին) հասցված վորոշակի նորմայական, առաջին հերթին վորակական ցուցանիշների հիման վրա. վոչ մի դեպքում չափից ավելի չծանրաբեռնել ուսանողական (ունկնդրական) կազմը և իրեն խնդիր չդնել մեխանիկորեն կրճատել ուսուցման ժամկետները:

Դասավանդողների մեջ սոցմրցակցության և հարվածայնության ցուցանիշ պետք է հանդիսանա ամենից առաջ նրանց կողմից ղեկավարվող ուսումնական խմբակների հառաջադիմությունը:

Բջիջը պետք է դնի սոցմրցակցության և հարվածայնության առույգ և առավելագույն չափով ցուցադրական հաշվառում, սիստեմատիկ (յուրաքանչյուր դեկադի համար) ստուգում և արդյունքների լուսաբանում:

5. Բուհ-երի բջիջները պետք է ուժեղացնեն իրենց ուշադրությունը յետ մնացող ուսանողների (ունկնդիրների) հետ տարվող աշխատանքը կազմակերպելու գործում: Յուրաքանչյուր առանձին ուսանողի (ունկնդրի) հառաջադիմության սիստեմատիկ ուսումնասիրության հիման վրա (կուրսային հրամանատարների միջոցով) բջիջները մի շարք միջոցառումների ճանապարհով (հետ մնացողների կցումը ավելի ուժեղ ընկերներին, հասարակական կարգով դասատուների ներգրավումը հետ մնացողներին օգնելու) պետք է հասնեն նրան, վոր կուրսում չլինի և վոչ մի հետ մնացող:

## ԲՈՒՀ-ԵՐԻ ԿԱՊԸ ԲԳԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԵՏ

6. Ուսանողների և ունկնդիրների ամբողջ հասարակական-կուսակցական բեռնավորումը պետք է կազմակերպվի այնպես, վորպեսզի նա ավելի մեծ չափով նպաստի կապակցելու Բուհ-երի ուսումնա-մարտական

...պատրաստությունը ուսանողների և ունկնդիրների պրակտիկային՝ ԲԳԿԲ զորամասերում:

Մի շարք ԲՈՒՀ-երում և մասնավորապես ակադեմիաներում գործադրվող՝ ուսանողների և դասախոսողների մեծ մասին կուսակցական աշխատանքի համար գործարաններին և ֆաբրիկներին կցելու սիստեմը պետք է փոխել:

Ունկնդիրների, ուսանողների և դասախոսողների հիմնական մասսայի արտադպրոցական (արտակադեմիական) կուսակցական-հասարակական բեռնավորումը պետք է ընթանա կայազորի զորամասերում: ԲՈՒՀ-երի կապը զորամասերի հետ պետք է դրվի այնպես, որպեսզի ԲՈՒՀ-ի յուրաքանչյուր բջիջ կապված լինի զորամասի մի վաշտ՝ հնարավորին չափ զենքի համապատասխան տեսակի ստորին բջիջի հետ:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԵՏ

7. Անհրաժեշտ է ամեն կերպ բարձրացնել վաշտային և կուրսային հրամանատարների դերը, որպես ամենամոտ պետերի և ուսանողական մասսայի հիմնական դաստիարակների:

Դասախոսողների կազմի հետ տարվող աշխատանքներում ԲՈՒՀ-երի բջիջների հիմնական ուշադրությունը պետք է ուղղված լինի ոժանդակելու յերիտասարդ դասախոսողների կադրերի (մասնավորապես ակադեմիաների պրոֆեսորների օգնականների) տեսական և գործնական աճմանը: Իրենց աշխատանքի ամբողջ սիստեմով բջիջների աշխատանքը պետք է ապահովեն համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ, բարձրացնելու համար այդ կադրերի մասնագի-



տական փորձը, նույնպես այդ նրանց մարքսիս-տական-լենինյան տեսական պատրաստության և կուսակցական կյանքին ակտիվորեն մասնակցելու հետ: Դրա հետ միասին բջիջը պետք է ամեն կերպ օժանդակի հրամանատարությանը կազմակերպելու տեխնիկական գիտությունների, սոցիալ-տնտեսագիտական ցիկլի և ընդհանուր կրթական առարկաների դասախոսողների սիստեմատիկ ռազմական պատրաստությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է լայնորեն հասարակական աշխատանքի մեջ ներգրավել անկուսակցական դասախոսողներին, այդ նպատակով նրանց կցելով վաշտերին և կուրսերին:

## ԱԳԻՏԱՑԻՈՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

8. ԲՈՒՀ-երի բջիջների աշխատանքներում մինչև այժմ համեմատաբար ավելի թույլ տեղ է հանդիսանում ագիտացիոն-մասսայական աշխատանքը, հատկապես անկուսակցական ուսանողական (ունկնդրական) և դասախոսողների կազմի մեջ, կարմիր բանակային կոմանդաներում և կամավորական ծառայողների մեջ: ԲՈՒՀ-երի բջիջները պետք է այստեղ ամենամոտիկ ժամանակում ունենան վճռական առաջխաղացում և ամբողջ ագիտացիոն-մասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրեն վաշտ:

Այդ տեսակետից հատկապես կարևոր խնդիրներ են ընկնում ԲՈՒՀ-ական մամուլի վրա: Մասնավորապես բոլոր ակադեմիաներում և խոշոր դպրոցներում պետք է դրվի տպագիր բազմատիրաժների սիստեմատիկ լույս ընծայում:

Գեղարվեստական աշխատանքների բնագավառում Ռուհ-երում անհրաժեշտ է հասնել ֆոտո-կինո-ռադիո գործի զարգացման և բոլոր ուսանողներին ու ունկընդիրներին գործնական սովորքներ պատվաստել այդ միջոցներին տիրապետելու համար:

Ագիտացիոն-մասսայական աշխատանքների դրումը Ռուհ-երում պետք է օրինակ դառնա զորամասերի համար և ունկընդիրների և ուսանողների մեջ դաստիարակի զորամասերում այդ աշխատանքները ղեկավարելու սովորքներ:

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Դպրոցներում պահպանելով կուսկազմակերպությունների առաջվա կառուցվածքի հիմնական տիպը, փորձել առանձին խոշոր դպրոցներում անցնել դասակային բջիջների սիստեմին, անմիջականորեն ենթարկելով նրանց դպրոցական կոլեկտիվի բյուրոյին: Բոլոր մնացած դպրոցներում, նայած նրանց ուսումնական կառուցվածքին, մտցնել բջջի նախագահության կողմից ջոկվող դասակային կուսկազմակերպիչների ինստիտուտ (այնտեղ, որտեղ այդ առաջ է գալիս անհրաժեշտությունից — դասարանային կուսկազմակերպիչներ):

Ռուհ-երի դասավանդողների կազմը պետք է լինի ուսանողական (ունկնդրական) բջիջներում:

Ռուհ-ի կոլեկտիվի բյուրոյին կից նպատակահարմար է կազմակերպել հետևյալ սեկտորները — կազմակերպչական — կուսակցական, ուսումնա-մարտական պատրաստության, ագիտացիոն – մասսայական աշխա-



տանքների և պրոպագանդիստական: Մյուս բջիջներում սեկտորներ չկազմակերպել: Կոնկրետ հարցերի մշակման համար բջջի նախագահությունը պետք է ստեղծի ժամանակավոր բրիգադներ (3–5 մարդուց ոչ ավելի կազմով) նախագահության անդամներից մեկի ղեկավարությամբ:

## ԿՈՄՍՈՄՈԼԸ ՌՈՒՀ-ԵՐՈՒՄ

10. Կոմսոմոլի մեծ տեսակարար կշիռը Ռուհ-երում, պահանջում է վճռականապես բարելավել կուսակցական ղեկավարությունը կոմյերիտական բջիջների նկատմամբ: Կոմսոմոլի նկատմամբ ղեկավարության բարելավումը պետք է անմիջականորեն կապված լինի կոմսոմոլի բջիջների կողմից իրենց աշխատանքի կոնկրետ խնդիրներին տիրապետելու, ուսումնա-մարտական և քաղաքական պատրաստության բոլոր բնագավառներում և կարգապահության մեջ կոմյերիտական-ուսանողների անպայման օրինակելիության հասնելու, նրանց գլխովին սոցիալիստական մրցակցության և հարվածայնության մեջ ներգրավելու հետ: Կոմյերիտական բջիջները պետք է ավելի լայնորեն ներգրավեն կոմսոմոլի շարքերը անկուսակցական ուսանողներին:

# ՍՏՈՐԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

*1. 2-րդ համաբանակային խորհրդակցությունից հետո ընկած ժամանակաշրջանում նշանակալից չափով աճել է ստորին մամուլն ու զինթղթակցական շարժումը, բարձրացել է նրանց դերը կուսակցության գլխավոր գծի մարտական պատրաստության պլանների կատարման ու գերակատարման, բոլշևիկյան ինքնաքննադատության ծավալման, և սոցիալիստական մրցակցության համար մղվող պայքարում: Զինթղթակից հարվածայինը դառնում է զինթղթակցական շարժման հիմնական դեմքը: Դրա հետ միասին, ստորին մամուլի և զինթղթակցական շարժման ասպարեզում կան մի շարք ամենալուրջ թերություններ: Նրանցից գլխավորները հետևյալներն են.—*

Վաշտային թերթերը չեն կարողանում մարտական պատրաստության համար մղվող կոնկրետ պայքարը կապակցել բարձրացված հարցերի բարձր քաղաքական սկզբունքայնության հետ, թույլ է նրանց ռազմա-տակտիկական մակարդակը, բարձր չէ վաշտային մամուլի ղեկավար կադրերի ռազմա-քաղաքական վորակը:

*2. Անհրաժեշտ է հետագայում ևս ձգտել ու հասնել մամուլի նկատմամբ կուսակցության ղեկավարության վճռական շրջադարձի, հատկապես նրա յետ մընացող օղակների, վաշտային մամուլի նկատմամբ, և ստորին մամուլի աշխատանքների համար քաղմարմինների և կուսկազմակերպությունների պատասխանատվության ուժեղացման:*



Յուրաքանչյուր կուսկազմակերպություն, յուրաքանչյուր վաշտային բջիջ, պետք է հասնեն նրան, վորպեսզի բոլոր կոմունիստները ու կոմյերիտականները ակտիվ կերպով մասնակցեն իրենց թերթին, վորպեսզի պետկազմն ու կուսբջիջները թերթի միջոցով կազմակերպեն կուսակցական քաղաքական և ռազմա-ուսումնական կամպանիաները, ոգտագործեն թերթը՝ վորպես զորամասերում մասսայական աշխատանքի բոլոր զանազանակերպ ձևերի զարգացման զենք:

*Քաղվարը, կուսբյուրոները, շրջանային և գնդային թերթերի խմբագրությունները կենդանի ղեկավարության հիման վրա պետք է ոգնություն կազ-*
*դրանքով (վաշտային թերթի որինակելի համարի լույս*
*մակերպեն վաշտային թերթերի խմբկոլներին՝ ցուցադրանքով (վաշտային թերթի որինակելի համարի լույսընծայում, զինթղթակիցների հրահանգում, մամուլի կանոնավոր տեսություններ գնդային բազմատիրաժներում և շրջանային թերթերում):*

*3. Կուսակցական բջիջը ապահովելով բոլշևիկյան ինքնաքննադատության հետագա ծավալումը ստորին մամուլում, դաստիարակչական աշխատանքների ամբողջ սիստեմով պետք է հասնի նրան, վորպեսզի զինթղթակիցները սիստեմատիկ կերպով լուսաբանեն աշխատանքի դրական որինակները, ստորաբաժանման արժեքավոր և իրեն արդարացրած փորձը փոխադրելով մյուս ստորաբաժանումները, առաջ քաշելով յետ մնացող բնագավառները և հասցնելով նրանց առաջավոր որինակելիներին:*

4. Կուսբջիջի կենտրոնական խնդիրներից մեկը պետք է դառնա պայքար վաշտային մամուլի վորակի համար, նրա բոլշևիկյան սկզբունքայնության և բովանդակության հագեցվածության համար, նպատակաձգման և կոնկրետության մարտական պատրաստության հարցերի դրման մեջ:

Անհրաժեշտ է—

ա) Վաշտային թերթերի խմբագիրներ առաջ քաշել համեմատաբար ավելի պատրաստված կուսակցականների, գերազանցապես բջիջի նախագահության անդամների կամ թեկնածուների թվից.

բ) Վաշտային թերթի աշխատանքների պլանը կառուցել վաշտի քաղաքական ու մարտական պատրաստության և բջիջի աշխատանքների պլաններին համապատասխան:

գ) Ամենօրյա գործնական աշխատանքներով դաստիարակել գինթղթակիցներին, դեկադային որացուցակներում ժամանակ հատկացնել գինթղթակիցների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների համար. հատկացված ժամանակում անցկացնել գինթղթակիցների հավաքներ, թերթերի լույս տեսած համարների վերլուծում, գինթղթակիցների տակտիկական խաղեր, գինթղթակցական բրիգադների աշխատանքների վերլուծում, մամուլի դեկադային աշխատանքների պլանի քննություն և այլն.

դ) Բջիջի նախագահությունում և ընդհանուր ժողովներում, նաև զորամասի կուսբյուրոյում պարբերաբար լսել վաշտային թերթերի խմբագիրների զեկուցումները և վաշտային թերթերի խմբկոլների ամբող-



ջական զեկուցումը, վաշտի կարմիր բանակային ժողովում.

յե) Գնդային դպրոցներում, մասնագիտական գորամասերում ապահովել հաստատուն կուսակցական ղեկավարությունը դասակային թերթերի նկատմամբ, նրանց բովանդակությունը շուռ տալ դեպի իր դասակի ուսուցման կոնկրետ հարցերը:

5. Նկատի առնելով զորամասերի մարտական պատրաստության պլաններում տակտիկական պարապմունքների հսկայական նշանակությունը և ստորին մամուլի վարժվածության անհրաժեշտությունը պատերազմական ժամանակվա աշխատանքի համար, հասնել նրան, վոր վաշտային թերթերը անխափան կերպով լույս ընծայվեն վաշտային տակտիկական պարապմունքներում, դաշտային յելույթներում, ջոկատային ուսուցումներում:

6. Ամբողջ ստորին մամուլը պետք է վճռականապես յերեսով շուռ գա դեպի տեխնիկան, բոլշևիկորեն պայքարի տեխնիկայի յուրացման և խնամքի համար, նրա տակտիկական հատկությունների ուսումնասիրելու համար:

Ստորին մամուլում կազմակերպել մշտական ռազմա-տեխնիկական պրոպագանդը, լույս ընծայելով տեխնիկային նվիրված հատուկ համարներ և յերեսներ և տանելով համապատասխան կազմակերպչական մասսայական աշխատանք (գինթղթակցական խորհրդակցություններ տեխնիկայի խնամքի ռացիոնալացման ու գյուտարարության ծավալման հարցերի մասին):

7. Կարմիր բանակը պայքարի տեխնիկական միջոցներով հագեցման և ստորին մամուլի աշխատանք-

ների պայմանների և խնդիրների բարդացման հետ կապված, կոնկրետացնել մամուլի ղեկավարությունը զորամասի առանձնահատկությունները լիովին հաշվի առնելու հիման վրա (ավիացիա, մոտորացված զորամասեր, ռազմա-ուսումնական հիմնարկներ, հրետանի, յերկրային զորամասեր և այլն):

Ամբողջ բանակի համար ընդհանուր հարցերից բացի, ավիա-մասերի զինթղթակիցներն ու թերթերը պետք է պայքարեն վթարների և այդ վթարումներն առաջացնող պատճառների լիակատար վերացման համար, օդաչուական կարգապահության համար, նյութական մասերի խնամքի համար, գյուտարարության ծավալման համար.

Մոտոմեխանիկական զորամասերի զինթղթակիցներն ու թերթերը պետք է պայքարեն մոտորին լիովին տիրապետելու համար, արագաշարժության և համագործակցության համար:

Հրետանային զորամասերի զինթղթակիցներն ու թերթերը պետք է պայքարեն հրաձգության ճշտության և արագության համար, հետևակի հետ սերտ համագործակցության համար, նյութական մասին և ձիակազմի խնամքի համար:

Յերկրային զորամասերի զինթղթակիցներն ու թերթերը պետք է պայքարեն միջհավաքային աշխատանքների վճռական բարելավման, նրա ռազմականացման, նրանցում փոփոխիկների 100 տոկոսով ընդգրկելու համար և այլն:

Սրանց համապատասխան, զորքի առանձին տեսակներում անցկացնել խմբագրերի սեմինարներ և տեխնիկական հավաքներ, կազմել մամուլի առանձին տեսա-



թյուններ, մանրազնին կերպով ուսումնասիրել մամուլի աշխատանքը տեխնիկական զորամասերում և վերակառուցել զինթղթակցական հավերժվածների բովանդակությունը շրջաններում:

8. Կարմիր բանակային մամուլի կենտրոնական խնդիրներից մեկն է հանդիսանում պայքարը պետկազմի հեղինակության հետագա ամրացման համար, պայքարը զորամասում կամ ստորաբաժանման մեջ այնպիսի դրության ստեղծելու համար, որը լիովին նպաստեր հրամանատարի կամքի բարձր հատկություններ կոփմակերպելուն: Կազմակերպելով կարմիր բանակային մասսային մարտական պատրաստության, սոցմրցակցության և հարվածայնության խնդիրների շուրջը, ցույց տալով աշխատանքների օրինակներ, մամուլը պետք է համառորեն պայքարի յերկաթե հեղափոխական դիսցիպլինայի և հրամանի հեղինակության հետագա ամրացման համար, պահանջկոտության բարձրացման և զորամասի ներքին վորոշակի կարգ ու կանոնի համար: Ստորին մամուլը պետք է մասսայականացնի օրինակելի հաստատակամ հրամանատարին՝ նրա ամբողջ պաշտոնական աշխատանքներում և նրա ավանգարդային դերը զորամասի կուսակցական և հասարակական կյանքում:

9. Ծավալել զինթղթակցական աշխատանքների հետագա վերակառուցումը հարվածայնության սկզբու- վրա:

Յուրաքանչյուր զինթղթակից հարվածային է, յուրաքանչյուր հարվածային՝ զինթղթակից, զինթղթակիցը առաջավոր մարտիկն է սոցմրցակցության— այսպիսին են ստորին մամուլի կազմակերպչական մասսայական աշխատանքի հիմնական լոզունգները:

Հասնել նրան, վորպեսզի գյուղթղթակից-հարվածայինները մամուլում իրենց տարած աշխատանքը դիտեն վորպես մասսայական պատրաստության համար տարած իրենց հարվածային աշխատանքի և կուսակցության գլխավոր գծի համար մղած պայքարի շարունակություն: Գյուղային և վաշտային թերթերի խմբկոլները պետք է դառնան մամուլի հարվածային բրիգադները շրջանային և կենտրոնական ռազմական թերթերի համար: Թույլ չտալ գյուղթղթակցական բրիգադի մեկուսացում գյուղթղթակիցների մնացած մասսայից, չըթուլացնել աշխատանքը անհատ-գյուղթղթակցի հետ. հետևել նրա աճմանը, քաշել նրան գյուղթղթակցական բրիգադների մեջ:

Միաժամանակ մամուլի կազմակերպչական մասսայական աշխատանքներում վճռականապես արմատախիլ անել պետկազմին, քաղմարմիններին և նրանց ոպերատիվ ֆունկցիաների իրենցով փոխարինումը:

10. Ուշադրության առնելով ստորին մամուլի աշխատանքի հսկայական թափը, գյուղային թերթերի խմբկոլները պետք է իրենց աշխատանքները վերակառուցեն տպագիր թերթերի աշխատանքների սկզբունքով, յուրացնելով նրանց հերթական համարների և կամպանիաների պլանավորման, նյութի կազմակերպման և մշակման, թերթերի տեխնիկական կազմակերպման, լույս ընծայման մեթոդները: Դրա համար սեմինարներում գործադրել խմբագրական աշխատանքի տեխնիկայի հետ կապված, հատուկ հարցերի ուսումնասիրությունը, անցկացնել էքսկուրսիաներ դեպի տպագիր թերթերի խմբագրությունները, ծավալել սոցմրցակ-



ցությունը խմբագրական աշխատանքի լավագույն դըրման համար:

11. Զարգացնելով ստորին մամուլի ղեկավար կադրերի վերապատրաստման գոյություն ունեցող ձևերը (խմբագիրների սեմինարներ, հեռակա կիժ (ժուռնալիստիկայի կոմունիստական ինստիտուտ, հրահանգավորում և այլն), լրացուցիչ կերպով գործադրել՝ ա) գյուղային թերթերի խմբագիրների (առանձնապես տպագիր) միամսյա ստաժիրովկա շրջանային խմբագրություններում. բ) «Վոենկոր» ժուռնալում կազմակերպել ստորին մամուլի ղեկավար կադրերի հեռակա ուսուցման դասընթաց. գ) մշակել գյուղթղթակիցների սեմինարների համար ծրագիր և կազմակերպել գյուղթղթակցական աշխատանքների համար ձեռնարկների հրատարակություն:

Շարունակել պետկազմի առաջքաշումը ստորին մամուլի ղեկավար աշխատանքների համար, ներգրավել նրան զորքական պայմանների մամուլի գնահատմամբ և սեմինարների ռազմատակտիկական խաղերի ղեկավարմանը:

12. Տպագիր թերթերի աճման և նրանց նշանակության բարձրացման հետ կապված, քաղմարմիններն ու շրջանային թերթերը պետք է ապահովեն նրանց ամենօրյա և կոնկրետ ղեկավարությունը, տան տպագիր թերթերի հատուկ տեսություններ, հատկապես նշեն նրանց առաջ կանգնած խնդիրները և դրանց լուծման մեթոդները: Պատերազմական ժամանակվա պայմաններում աշխատելու վարժվածության համար շարունակել տպագիր թերթերի հրատարակումը՝ դաշտային յե-

կույտներում, սովորական բազմացնող մեքենաների վը-րա (ռոտատոր, հեկտոգրաֆ և այլ):

13. Նշելով ստորին մամուլի անթույլատրելի հե-տամնացածությունը մի շարք ազգային զորամասե-րում և ստորաբաժանումներում, ամեն կերպ ուժեղաց-նել ղեկավարությունն ազգային մամուլի նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնելով ստորին ազգային մամուլի կադրերի ստեղծագործմանն ու դաստիարակ-մանը, ազգային ստորաբաժանումների առաջավոր թեր-թերի աշխատանքի փորձի փոխադրմանը, ազգային զո-րամասերի կարմիր բանակային հարվածայիններին զին-թղթակցական շարժման մեջ ավելի ներգրավել և ապա-հովել զինթղթակցական գրականության թարգմանու-թյունները ազգային լեզուներով:

14. Արմատապես բարելավել պատի-թերթերի աշ-խատանքը և նրա ղեկավարությունը: Օգտագործել նը-րանց ավելի լավ հնարավորությունները (անմիջապես արձագանքումը անցքերին, մրցակոչեր, միտինգ-ներ): Գնդային պատի-թերթերի ղեկավարությունը կենտրոնացնել առանձին խմբակներում՝ բազմատի-րաժ թերթերի խմբագիրների գլխավորությամբ:

Լայնորեն օգտագործել փոտո-սիրողների խմբերն ու խմբակները՝ պատկերազարդելու համար վաշտային թերթերը և հրատարակելու զորամասում փոտո-թերթ:

15. Զորամասերում առող ԼՈԿԵՄԻ գրական խըմ-բակները ներգրավել թերթերի աշխատանքներին, նը-րանց ստեղծագործությունն ուղղելով մարտական պատրաստության ուժեղացման կողմը. Իլյիչովկանե-րում և բազմատիրաժներում օգտագործելով ոչերկներ, երգեր, լոզունգներ բանաստեղծություններում, վո-



տանավորներ մարտական պատրաստության թեմաների շուրջը:

16. Կենտրոնական ժուռնալ «Վայենկորը», «Կրաս-նայա Զվեզդան», շրջանային թերթերը պետք է ուժե-ղացնեն կենդանի ղեկավարությունը ստորին մամուլի նկատմամբ, սիստեմատիկորեն գնահատեն և ուղղու-թյուն տան նրա աշխատանքներին, հրահանգավորեն նրան կարևոր կամպանիաների առթիվ, մանրազնին կերպով հաշվի առնեն և ընդհանրացնեն ստորին մա-մուլի աշխատանքների [illegible] ծավալելու դա-ստիարակչական աշխատանքները զինթղթակիցների հետ:

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0218703

41.267